

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ  
Մ. ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՎԵՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՄԵՍՐՈՊ ԽԻՉԱՆՑՈՒ  
«ՍՈՒՐԲ ԾԱՂԻԿ» ԱՎԵՏԱՐԱՆԸ

Մատենադարանի հմր. 11203 Ավետարանի նկարազարդումը



ԵՐԵՎԱՆ  
«ՆԱԻՐԻ»  
2016

Ալբոմ-ուսումնասիրությունը տպագրվել է «Մատենադարանի բարեկամներ»  
հիմնադրամի ֆինանսավորմամբ:

The album was published under the support of the “**Friends of Matenadaran**” Foundation.

Տպագրվում է  
Մաշտոցի անվան Մատենադարանի  
Գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ պատմ. գիտ. դոկտոր ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Խ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՎԵՏ

Մեսրոպ Խիզանցու «Սուրբ Ծաղիկ» Ավետարանը, Մատենադարանի  
հմր 11203 Ավետարանի նկարագարդումը.- Ալբոմ-ուսումնասիրություն / Ա.  
Ավետիսյան, Մատենադարան, Եր.: Նաիրի, 2016, 79 էջ:

Ալբոմ-ուսումնասիրությունը նվիրված է Մեսրոպ Խիզանցու հմր.  
11203 Ավետարանի նկարագարդումանը (1619 թ.), որը Վասպուրականի  
մանրանկարչության լավագույն ձեռագրերից է:

ՀՏԴ  
ԳՄԴ

© Մ. Մաշտոցի անվան «Մատենադարան», 2016

© Ավետիսյան Ավետ, 2016

ՄԵՍՐՈՊ ԴՊԻՐ ԽԻՉԱՆՅՈՒ  
«ՍՈՒՐԲ ԾԱՂԻԿ» ԱՎԵՏԱՐԱՆԸ

ՆԱԽԱԲԱՆ

ԺԵ դարում, Աղթամարում և շրջակա գրչության կենտրոններում աշխատած Մինաս ծաղկողն<sup>1</sup> արժատապես փոխեց վասպուրականյան ավանդական ոճն ու պատկերազրույթյունը՝ ներմուծելով կիլիկյան մանրանկարչությանը հատուկ գեղարվեստական մտածելակերպ ու պատկերացումներ: Մինասին ժամանակակից և հետագա վասպուրականցի վարպետներն աշխատում էին նկարազարդ ձեռագրի ստեղծման նոր սկզբունքներով և միայն մանրանկարների հորինվածքների մանրամասներում էին քիչ թե շատ հետևում նախնյաց ժառանգությանը: Այդ նորամուծությունների արդյունքում փոխվում էր ոչ միայն մանրանկարների պատկերազրույթյունը, այլև հաջորդական տեսարանների կազմն ու գեղարվեստական մեկնաբանությունը: Փոփոխությունների ջատագովները հատկապես այն ծաղկողներն էին, որոնք հարում էին Վասպուրականի մանրանկարչության Վանի ուղղությանը: Շուրջ երկու հարյուր տարի այդ պատկերազրական-ոճական համակարգը կիրառվում և մշակվում էր՝ ներառելով նաև ինդանի մանրանկարչության որոշ տարրեր, դառնալով նոր խոսք Վասպուրականի մանրանկարչության մեջ:

Հետագայում, մասնավորապես շահաբասյան բռնազաղթի օրերին (1604 թ.), նաև դրանից առաջ և հետո, Պատմական Հայաստանի զանազան վայրերից բռնի կամ կամավոր Պարսկաստանում հայտնված շատ հայ մանրանկարիչներ իրենց հետ տանում էին եկեղեցական բազմաթիվ ու տարբեր ուղի ձեռագրեր՝ որպես գաղափար օրինակ օտարության մեջ օգտագործելու համար: Այդ ձեռագրերի մեծ մասը, բնականաբար, Ավետարաններ էին, որոնք որոշ մատյանների մանրանկարները ներկայացնում են վերոնշյալ պատկերազրական-ոճական կազմը: Մեսրոպ դպիր ինդանցու «Սուրբ Ծաղիկ Ավետարանը» դրա վառ օրինակն է:

Ավետարանի մանրանկարները, որոնք ներկայացվում են ընթերցողի ուշադրությանը, ԺԵ դարի հայկական մանրանկարչության լավագույն նմուշներից են, և առանձնանում են կատարման բարձր վարպետությամբ, ընդգծված ոճականությամբ, պատկերազրական ու խորհրդաբանական մանրամասների եզակիությամբ:



1 Վասպուրականցի այս մանրանկարիչը ստեղծագործել է 1432-1483 թվականներին: Եղել է Մեծփավանքի սան, աշակերտել է Թովմա Մեծփեցուն, ձեռագրեր է նկարազարդել Արճեշում, Վանում, Արծկեում, Մեծփավանքում, Արգելանի վանքում, Մուխարավանքում, Կտուց, Լիմ անապատներում և այլուր: Մինաս ծաղկողի մասին տես՝ է. Վարդանյան, «Մինաս Ծաղկող (15-դ դար, Վասպուրական)» թեկնածուական թեզ (անտիպ), Երևան, 2000 թ.:

## Մեսրոպ դպիր Խիզանցի



Մեսրոպ Խիզանցին ժէ դարի հայկական մանրանկարչութեան նշանավոր վապետներից մեկն է<sup>2</sup>: Մանրանկարիչ, գրիչ, կազմող, նորագող նա տիրապետել է գրչութեան արվեստի գրեթե բոլոր հարակից մասնագիտություններին: Ձեռագիր գրքի վարպետը մոտ կես դար ապրել է ստեղծագործական բեղուն կյանքով թողնելով հարուստ ժառանգություն: Պահպանվել են նրա անվանը<sup>3</sup>, անմիջականորեն առնչվող 45 տարաբնույթ ձեռագիր մատյաններ<sup>4</sup>:

Տաղանդաշատ այս մանրանկարիչը ծնվել է Խիզանում<sup>5</sup>: Նրա անունն առաջին անգամ հիշատակվում է 1603-1604 թթ. գրված մի Ավետարանում<sup>6</sup>: Մանրանկարչի ծննդյան տարեթիվը ստույգ հայտնի չէ. գիտենք միայն, որ Մեսրոպ դպիրը մահացել է 1652 թվականին կամ դրանից շատ չանցած<sup>7</sup>:

Մեսրոպ Խիզանցին գրեթե ողջ ստեղծագործական կյանքն ապրել է Պարսկաստանում<sup>8</sup>, որտեղ հայտնվել է «տարագնաց եկաւորութեամբ»: Ձեռագրեր է ստեղծել Սպահանում՝ Նոր Ջուղայում և Սպահանին մերձակա հայկական բնակավայրերում, նաև Երնջակի Ս. Կարապետում:

Մեսրոպ Խիզանցու ձեռագրերի հիշատակարաններում պահպանվել են նրա մերձավորների անունները, հոր՝ տեր Մարտիրոսի, մոր՝ Խոնդքարի, եղբայրների՝ տեր Թադեոսի ու Պարսամի, քույրերի՝ Աննայի ու Դեղձունի, որդիների՝ Մարտիրոսի, Գրիգորի, Թադեոսի, դուստրերի՝ Նուրխանի ու Վառվառի: Նրա որդին՝ Մարտիրոսը, նույնպես հմտացել է գրչութեան արվեստի մեջ և շարունակել հոր գործը:

Մեսրոպ դպիրը, ինչպես ինքն է իրեն անվանում շատ հիշատակարաններում, այն երջանիկ արվեստագետներից է, ովքեր աշակերտել են նշանավոր վարպետների: Բոլոր հիշատակարաններում մանրանկարիչը սիրով ու երկյուղածորեն է տալիս նրանց անունները: Նրա ուսուցիչներն են եղել հռչակավոր մանրանկարիչներ Մարտիրոս Խիզանցին<sup>9</sup>, Սարգիս

2 Մեսրոպ Խիզանցու մասին տես՝ Յ. Քիրտեան, Խիզանցի դպրոցին գրիչներն ու մանրանկարիչները եւ իրենց յիշատակարանները, Փարիզ, 1951 թ., էջ 125-134: Ն. Ծովակյան, Հայ նկարողներ, «Սիոն», 1988 թ., թիւ 7-8-9, էջ 129-130: Ա. Գեորգեան, Հայ մանրանկարիչներ. մատենագիտութիւն IX-XIX դդ., Գահիրէ, 1998 թ., էջ 402-406: Մ. Arakelyan, Mesrop of Xizan. An Armenian master of the seventeenth century, London, 2012, և այլն:

3 Ավետարաններ, Սաղմոսարան, Հայսմավուրք, ճաշոց, ճառընտիր, ժողովածու և այլն:

4 Այդ ձեռագրերը գտնվում են Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի, Իտալիայի, Ավստրիայի, Գերմանիայի, Անգլիայի, Իռլանդիայի, Իրանի, Սիրիայի, Իսրայելի և ԱՄՆ տարբեր հավաքածուներում: Տես՝ Մ. Arakelyan, Mesrop of Xizan..., էջ 174:

5 Բոլոր հիշատակարաններում նա հայտնում է Խիզանցի լինելը:

6 Ավետարանը գտնվում է մասնավոր հավաքածուում: Տես՝ Վ. Ներսիսյան, Հայերեն մոր ձեռագրեր Անգլիայում, «Բանբեր Սատենադարանի», Երևան 1980, թիվ 13, էջ 338-339: Վ. Ներսիսյանը տեղեկացնում է, որ այդ ձեռագիրը վաճառվել է Լոնդոնի Սոսթի աճուրդում 1975 թվականին: Ցավոք, որևէ այլ բան այդ Ավետարանի մասին չգիտենք:

7 1652 թվականին ընդօրինակված ճառընտիրի հիշատակարանում Մեսրոպ դպիր աշակերտ Գասպար քահանայի աշակերտ Յովսեփը գրում է. «... յիշեցեք... զՄեսրոպ դպիր Խիզանցին, որ փոքր ի շատ և նա աշխատեցաւ ի վերայ ս(ուր)ք տառիս»: Այս փոքրիկ հիշատակությունից պարզ է դառնում, որ Մեսրոպը արդեն առաջացած տարիքում էր: Տես՝ Ցուցակ հայերեն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի, հ. Ա, կազմեց Սմբատ Տեր-Աւետիսեան, Վիեննա 1970, էջ 295: Ն. Պողարյանը (Ծովակյան) Մեսրոպի ծննդյան տարեթիվը թեաքար համարում է 1590 թվականը: Տես՝ Ն. Ծովակյան, Հայ նկարողներ..., էջ 129:

8 Մ. Առաքելյանը առանձնացնում է Մեսրոպ Խիզանցու ստեղծագործության երեք փուլ՝ 1603-1609 թթ. (աշակերտ), 1609-1623 թթ. (վարպետ) և 1623-1652 թթ. (ուսուցիչ): Տես՝ Մ. Arakelyan, Mesrop of Xizan..., էջ 17-18:

9 Մարտիրոս քահանային ժամանակակիցները անվանում էին՝ քաղցրածայն երաժիշտ, անհաս փիլիսոփա, վարպետաց վարպետ, ինչը վկայում է նրա բազմակողմանի հմտությունը-

Մագմանը (Մոկացի)<sup>10</sup>, Մարտիրոս Խիզանցու որդի՝ Գրիգորիսը: Որպես աշակերտ աշխատել է նաև Մարտիրոս Խիզանցու քրոջ որդի՝ Խաչատուր Խիզանցու հետ: Ստեղծագործական սերտ առնչություններն այս մանրանկարչական գերդաստանի անդամների հետ մեծապես նպաստել են Մեսրոպ Խիզանցի արվեստագետի ձևավորմանը:

Սիրելի ուսուցիչների մահվանից հետո<sup>11</sup>, Մեսրոպ Խիզանցին, արդեն որպես հասուն վարպետ, ուներ աշակերտներ, ստեղծագործում էր նրանց հետ, և միաժամանակ կուտակած գտելիքները փոխանցում նրանց: Այդ տարիներին Մեսրոպ դպրի համբավն այնքան մեծ էր, որ նրա հետ ձեռագրեր էր ընդօրինակել ժամանակի նշանավոր տաղասաց ու մանրանկարիչ Ստեփանոս Ձիք Ջուղայեցին<sup>12</sup>: Մեսրոպն էր արժանիորեն այն մեծ վարպետը, ով շարունակեց Խիզանցի մանրանկարիչների փառահեղ սերնդի գործը:

### «Սուրբ Ծաղիկ Ավետարանը»

«Սուրբ Ծաղիկ Ավետարանը»<sup>13</sup> Մեսրոպ Խիզանցին նկարազարդել է 1619 թվականին՝ «ի դառն եւ ի նեղ ժամանակի» (260ա): Ավետարանի գրիչը Հայրապետ երեցն է: Մեսրոպը ևս մասնակցել է գրչությունը. «Ես՝ Մեսրոպս, գՈհան գլուխն անարժանութեամբ միայն գրեցի»: Ավետարանը գրվել ու նկարազարդվել է Սպահանում, Ստեփանոս քահանայի պատվերով: Ձեռագիրն ստեղծելիս գրիչն ու մանրանկարիչը օգտվել են ընտիր գաղափար օրինակից<sup>14</sup>:

Ավետարանը (24X18 սմ) բաղկացած է 261 թղթե թերթից, գրությունը՝ երկսյուն է, գիրը՝ բոլորգիր, տողերը՝ 22, կազմը կաշեպատ է, միջուկը՝ տախտակ, կրկնակազմը արծաթից է (1905 թ.): Կրկնակազմին Հիսուսի Հարություն տեսարանն է, իսկ ծայրերին՝ երկուական հրեշտակների գլուխներ: Գրչության և նկարազարդման (1619 թ.) հիշատակարանը զետեղված է 260ա էջին: Հետագայի հիշատակարանները զետեղված են՝ 11ա, 16բ, 17ա, 260բ, 261ա, 261բ էջերին: Ունի 18 տերունական մանրանկար, 10 խորան, ավետարանիչների 4 պատկեր, 4 անվանաթերթ, 9 թեմատիկ լուսանցապատկեր, նաև լուսանցազարդեր (առավելապես բուսական և թռչնազարդ), զարդագրեր<sup>15</sup>:



ները հոգևոր արվեստներում:

- 10 Մագման՝ նշանակում է մագ մանող արհեստավոր: Տես՝ Ռ. Ա. Ղազարյան, Զ. Մ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Երևան, 2009 թ., էջ 482: Ինքը՝ Սարգիս Մոկացի գրում է. «Սարգիս Մոկացի սոսկ անուամբ քահանա, որ մականունն Մագման յորջորջեն, որ եւ ըստոյգ գործի է անուն, զի մագման վասն յետս կոյս ընթանալոյն ասի եւ է ճշմարիտ»: Տես՝ ՄՍ. ձեռ. հմր. 278: Ի դեպ՝ Սարգիս Մագմանը նույնպես Մարտիրոս Խիզանցու աշակերտն է:
- 11 1602 թվականին մահանում է Սարգիս Մագմանը, 1607 թվականին միաժամանակ մահանում են Մեսրոպ Խիզանցին, որդին՝ Գրիգորիսը և Խաչատուր Խիզանցին:
- 12 Զ. Ն. Ալիմեան «Ստեփանոս Ձիք Ջուղայեցի գրիչ, նկարիչ եւ տաղասաց քահանայ (1603-1637)», Գանդես Ամսօրեայ 1947, Յունուար, էջ 112-123:
- 13 ՄՍ. ձեռ. հմր. 11203
- 14 «Որ է սա ընդիր արինակէ» (260ա):
- 15 Ավետարանի նկարագրությունը տալիս ենք ըստ ձեռագրի: Տես՝ նաև Յուզակ հայերեն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի, կազմեց՝ Սմբատ Տեր-Աւետիսեան, հ. Ա, Վիեննա 1970, էջ 157-158:



## Մանրանկարների պատկերագրական, հորինվածքային և ոճական հիմնական առանձնահատկությունները

Մեսրոպ դպիրն իր պատկերագրադած ավետարաններում կիրառում է Տերունական պատկերաշարի երկու հիմնական պատկերագրական տարբերակ՝ ընդարձակ և համառոտ: Մանրանկարների սկզբնապատկերները որոշ Ավետարաններում սկսվում են Հին կտակարանյան որևէ տեսարանով<sup>16</sup>: Այստեղ՝ «Սուրբ Ծաղիկ Ավետարանում», Մեսրոպը պատկերագրական անդրադարձ չի կատարել Հին Ուխտին: Այս սկզբունքը և մանրանկարների կազմն ու հաջորդականությունը գալիս են այն գաղափար օրինակից, որը մանրանկարիչը օգտագործել է ձեռագիրը նկարագրողիս:

Ավետարանի բոլոր թեմատիկ մանրանկարները ամփոփված են երկչերտ շրջանակի մեջ: Դրանք զարդարված են առավելապես երկրաչափական զարդերով և գույների ընտրությամբ ներդաշնակ են պատկերների ընդհանուր գունային համակարգին: Այդ թանձր գունավորված շրջանակները հստակեցնում ու ձևավորում են Մեսրոպ դպիր մանրանկարների նկարագրաչտր: Նույնատիպ շրջանակների կիրառությունը, սակայն, գերծ է միօրինակությունից, քանի որ մանրանկարիչը, մերթ ընդ մերթ, ութմիկ հաջորդականությամբ «կոտորում» է շրջանակի վերին երկրորդ բուն պատկերից դուրս եկող որևէ դետալով<sup>17</sup>:

Նրա ստեղծած նկարագրաչտրի ներքին տարածքները ունեն յուրօրինակ բաժանումներ<sup>18</sup>, որոնք ոչ միայն լուծում են սահմանափակ տարածքում կերպարները ճիշտ տեղադրելու խնդիրը, այլև շեշտադրում են հորինվածքի բաղկացուցիչ որևէ էական դետալը, արժևորում են կերպարներն ըստ իրենց դերակատարությունից, կամ ներկայացնում են նրանց՝ ըստ խորհրդանշական խմբերի: Այդ կերպ «Մատնություն» մանրանկարում ներկայացված է գիշերը: Վարպետը Հիսուսի գլխամասում վրձնել է փոքրիկ խորան, որի մեջ երկնագույն խորքի վրա պատկերել է աստղազարդ երկինքը, իսկ «Ղազարոսի հարություն» մանրանկարում, փոքր ուղղանկյունու մեջ ներկայացված է հրաշքին ականատես ժողովրդի խումբը<sup>19</sup>:

Մեսրոպ Խիզանցին հորինվածքների մեջ երբեմն պատկերում է ուղղահայաց, դեպի վեր ձգվող խորանատիպ կառույցներ<sup>20</sup>, որոնցում տեղադրում է ներկայացվող պատկերագրական տեսարանի գործող առանձին անձանց կամ խմբերի: Որոշ մանրանկարներում նա հորինվածքը երկատում է հորիզոնական եզրաշերտով<sup>21</sup>, գլխավոր կերպարներին ու առանցքային իրադարձությունը պատկերելով վերին, ավելի մեծ հատվածում: Այդպես է, օրինակ, «Պայծառակերպություն» (Յբ), «Հարություն» (Շա), «Հոգեգալուստ» (Շբ) տեսարաններում: Մեսրոպ Խիզանցին օգտագործում է նաև ալիքաձև բաժանարարներ, որոնց սահմանազատող գործառույթը և՛ խորհրդաբանական է և՛ հորինվածքային: Մասնավորապես «Ծնունդ» մանրանկարում նման ձևով գատված է Հովսեփը, «Մուտք Երուսաղեմ» պատկերում Հիսուսն ու աշակերտների խումբը տա-

16 Օրինակ, Մատենադարանի հմր. 294 ձեռագրում դա «Եգեկիելի տեսիլքն» է (1բ):

17 Դրանք հիմնականում սոխուկակերպ, խաչակիր, փոքրիկ գմբեթներ են:

18 Դրանք ուղղահայաց, հորիզոնական, կամ ալիքաձև երկրորդ են:

19 Մանրանկարիչը պատկերել է միայն նրանց գլուխները:

20 Այդ յուրօրինակ խորանները պսակվում են սրագագաթ, կլորավուն, հարթ և այլատիպ վերնամասերով:

21 Ուղղահայաց և հորիզոնական բաժանարարների մանրանկարչական ձևավորումը հար և նման է պատկերի շրջանակի գեղարվեստական մշակմանը:

բանջատված են դիմավորողներից, «Դժոխքի ավերումը» տեսարանում՝ Երկինքն ու դժոխքը:

Մանրանկարների հորինվածքային այս ընդհանուր սկզբունքն էլ թույլ է տալիս դիտողին հրավիրել մի խորհրդավոր տարածք, որում երկնայինի ու երկրայինի մեկտեղումը կրկնվում է իրար հաջորդող բոլոր պատկերներում՝ առավել ընդգծելով Հիսուս Քրիստոսի փրկագործական տնօրինությունների ժամանակային և վերժամանակային ընթացքն ու խորհուրդը:

## «Սուրբ Ծաղիկ Ավետարանի» մանրանկարները

### Ավետում (1բ)

(ՏՊ<sup>3</sup> μñÇĬ Ññ»βī ³İŸ ³õ»i Çë ĩ ³Uñ ë(áõñ)μ ĩáõëÇŸ Ø³ ñÇ³ Úáõ |)²²Է

«Ավետում» մանրանկարը ստեղծված է ստատիկ հորինվածքի սկզբունքով<sup>23</sup>: Մանրանկարի առանցքը Երուսաղեմի տաճարը խորհրդանշող ճարտարապետական կառույցն է, որն ունի եռաստիճան պատվանդան, իսկ վերնամասում՝ վարագույրը խորհրդանշող կտորն է<sup>24</sup>: Վարագույրը վեր է հավաքված, ինչը նշանակն է Աստծո և մարդկանց միջև այն անջրպետի վերացման, որը սկզբնավորվեց Հիսուսի աշխարհ գալով:

Գաբրիել հրեշտակն ու Կույս Մարիամը կանգնած են այս գմբեթակիր տաճարիկի աջ և ձախ կողմերում: Գմբեթակիր են նաև այն խորանները, որոնց մեջ Մեսրոպ Խիզանցին պատկերել է Աստծո պատգամաբերին և Սուրբ Կույսին: Սակայն ի տարբերություն Երուսաղեմի տաճարի գմբեթի, սրանք պսակված են խաչերով: Դա նշանակում է, որ մանրանկարիչն արդեն «Ավետում» պատկերում ազդարարում է սկիզբն ու ավարտը այն փառավոր առաքելության, որի համար ընտրված է Կույս Մարիամը: Հիսուսու Քրիստոսի ծնունդը, վարդապետությունը, չարչարանքներն, խաչելությունը, հարությունը և մյուս տնօրինությունները, որոնց արդյունքում ստեղծվելու է Նրա խորհրդական մարմինը՝ Եկեղեցին. խորանատիպ կառույցների խաչակիր գմբեթները դա են խորհրդանշում:

Հրեշտակն ու Մարիամը կրում են ավանդական հանդերձներ՝ քիտոն ու թիկնոց: Հրեշտակի քիտոնը կանաչ է, Մարիամինը՝ կապույտ, իսկ թիկնոցները՝ կարմիր են: Մարիամի թիկնոցի կարմիրը խորհրդանշում է Որդու Արյունը, Գաբրիել հրեշտակինը՝ երկնային զվարթունի հրեղեն էությունը:

Մանրանկարի վերնամասում իմանալի Երկինքի եռաչերտ սեզմենտն է (հատվածը), որից, դեպի Մարիամի աջ ախանջն է սլանում աղավնակերպ Սուրբ Հոգին<sup>25</sup>: Մարիամի ու հրեշտակի լուսապսակները դեղին են՝ երիզ-



22 Բոլոր մանրանկարների անվանումներից հետո նշվում են պատկերատակերի գրությունները, պահպանելով բնագրի ուղղագրությունը:

23 Այդպիսին են նաև. «Տյառնընդառաջ», «Սկրտություն», «Պայծառակերպություն», «Ուղվա», «Խաչելություն» մանրանկարները:

24 Տաճարի վարագույրը վեր է բարձրացված և երևում է Սրբություն Սրբոց: Վարագույրի թեման շարունակվում է նաև հաջորդ մանրանկարներում:

25 Համարվում է, որ Սուրբ Հոգին Մարիամի մեջ է բնակվել մտնելով ականջից. «...Բանն Աստուած տնուտ ընդ ունկն լսելեացն (Մարիամի - Ա.Ա.) ի ներքս...»: Սրա գրական հիմքը «Գիրք տղայութեան Քրիստոսի» պարականոն է: Տես («Թանգարան հայկական հիմն և նոր դպրութեանց», հ. Բ, Անկանոն գիրք Նոր Կտակարանաց, Վենետիկ 1898, էջ 19):



լի երկինքը, երկրորդը՝ իմանալին: Այս պատկերում Մեսրոպ Խիզանցին կրկին անդրադարձել է բացվող վարագույրի թեմային, որը պատկերել է այլքաձև կտորի տեսքով:

Մանրանկարի ստորին մասում Հովսեփն ու Հովիվն են: Հովսեփն առանձնացված է հորինվածքի ձախակողմյան անկյունում<sup>34</sup>: Սրնգահար Հովիվը՝ նոխազի և գառան ուղեկցությամբ շարժվում է դեպի Հովսեփը: Թագանման ոսկե ընծան պատկերված է հենց Հովիվի գլխավերևում: Մեսրոպ Խիզանցին նկատի ունի, որ աշխարհ եկած թագավորը նաև Հովվապետ է և պիտի Հովիվի Իր ժողովրդին:

### Տյառնընդառաջ (2բ)

(ՏԾ<sup>3</sup>Ե<sup>3</sup>ԵՄ<sup>3</sup>Օճ<sup>3</sup> [․ 3Էáօēi Ȳ] Ȳ i 3×3ñȲ · ½U<sup>3</sup>YáóIȲ · Á․ áօ»<sup>3</sup>օ ԵՇ․ UչáȲ I »ñȲ Ȳ․ ȲñI Ե Ȳօñ i)Է

Մանուկ Հիսուսի հանդիպումը Սիմեոն ծերունու հետ տեղի է ունենում Երուսաղեմի տաճարում, որը ներկայացված է երկխորան, եռազմբեթ կառույցի տեսքով, կենտրոնում՝ Սրբություն Սրբոցի նշանակը<sup>35</sup>: Մանրանկարի հորինվածքը ստատիկ-ուղղահայաց է, ինչը նրան հաղորդում է առանձնակի հանդիսավորություն:

Սրբություն Սրբոցից ձախ Մարիամն ու Հովսեփն են, վերջինիս գրկում, լայնաբերան թաս հիշեցնող ամանի մեջ նստած են զոհաբերության համար նախատեսված տատրակները: Մարիամը խնդրարկուին բնորոշ շարժումով ձեռքերը ուղղել է դեպի աջակողմյան հատվածում պատկերված Սիմեոն ծերունին: Նա ձեռքերի մեջ է պահում Մանուկ Հիսուսին՝ կարծես իր գիրկը ընդունելու համար: Ծերի թիկունքում կանգնած է Երուսաղեմի տաճարի քահանաներից մեկը: Հետաքրքրական գեղարվեստական լուծում ունի Մանուկ Հիսուսի կերպարը: Նա իր փոքրիկ ձեռքերը տարածել է աջ ու ձախ և այդ շարժումով իրար կապել երկու հանդիպակաց խմբերը:

Սովորաբար, «Տյառնընդառաջ» տեսարանում, ըստ ավետարանական բնագրի<sup>36</sup>, Սիմեոնի կողքին պատկերում են Աննա մարգարետուհուն, սակայն մեր մանրանկարում Մեսրոպ Խիզանցին օգտվել է հազվադեպ մի պատկերազրական օրինակից, որի հիմքում կրկին «Գիրք տղայութեան Քրիստոսի» պարականոնն է: Տյառնընդառաջի պատմության այս տարբերակում, Երուսաղեմում քառասուն օրեկան Հիսուսին դիմավորում են տաճարի քահանաները, որոնցից մեկը Սիմեոն ծերունին է<sup>37</sup>:

Սիմեոն ծերունին<sup>38</sup> պատկերված է ավանդական տիպաբանությամբ՝ երկար մազերով ու մորուքով: Սակայն. ցանկանալով կարևորել այս կերպարը՝ Մեսրոպ Խիզանցին հատուկ շեշտադրել է նրա դեմքն ու դիմագիծը: Այդ ընդգծված խոշոր դեմքին, մանրանկարիչը պատկերել է է՛լ ավելի



34 Հովսեփի մեկուսացումը ընդհանուր խմբից խորհրդանշում է նրա կասկածները Մարիամի Սուրբ Հոգուց հղացած լինելու վերաբերյալ, որոնք փարատվում են միայն երկնային միջամտությամբ և այն հիացումը, որ նա վկան է Աստծո Որդու ծննդյան հրաշքին:

35 Այստեղ ինչպես «Ավետում» մանրանկարում Սրբություն Սրբոցի վարագույրը վեր է բարձրացրած:

36 Դուկ. Բ 21-40: Աստուածաշունչ մատեան Հին և Նոր կտակարանների, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1994 թ.:

37 «... և եկեալ մտեալ ի քաղաքն յերուսաղէմ, և տարեալ զմանուկն Յիսուս առաջի քահանայիցն...»: Տե՛ս «Գիրք տղայութեան Քրիստոսի» էջ 54:

38 Սիմեոնը այն աստվածավախ և Իսրայելի փրկությունը ակնկալող մարդն էր, որին. «Սուրբ Հոգուց հրամայուած էր... մահ չտեսնել, մինչեւ որ տեսնէր Տիրոջ Օծեալին» (Դուկ. Բ 26):



ընդձեռնած աչքեր, որոնց միջոցով արտահայտված է Միմեոնի երկարատև սպասումը<sup>39</sup> և այդ սպասման հանգուցալուծումը՝ Մանուկ Հիսուսը: Միմեոնը կապող օղակ է Հնի և Նորի միջև: Նրա անասելի երկար ծերությունը խորհրդանշում է Հին Ուխտը՝ անկատար Օրենքը, որը ի գործու է փրկելու: Միմեոնը, Օրենքի պատվիրանների տակ կքած, գալիս է Տիրոջն ընդառաջ, և որպես հավատով սրբագործված սպասումի պարզև, իր գրկում ունի Փրկչին՝ Նրան, Ով տալու է Նոր Օրենք՝ շնորհական, կատարյալ ու փրկագործող:

**Մկրտություն (3ա)**

(SØĪ nī áoĀÇ(óY) Ø(nÇëi áe)Ç áñ Ç Uañ<sup>13</sup>Y<sup>3</sup>Y · »i Y Çç<sup>30</sup> · · ½· ÉáöEY í ÇB<sup>3</sup>áÇY ç<sup>3</sup>Ñç<sup>3</sup>Ñ»<sup>30</sup> |)E

Եռախորան այս հորինվածքի կենտրոնում Հիսուս Քրիստոսն է: Նրա մերկությունը թաքցնում է կոնքակապը: Հորդանանի ջրերը խորհրդանշող կապտա-սպիտակավուն ալիքները ծածկում են Հիսուսի ոտքերը: Աջից Հովհաննես Մկրտիչն է, ձախից՝ մկրտությունը սպասարկող միակ հրեշտակը<sup>40</sup>: Մանրանկարում Մեսրոպ Խրզանցին խուսափել է Հորդանանի ափերը ցույց տվող դեկորից, և Հովհաննեսի ու հրեշտակի հենարանը ոչ թե հողն է այլ ջուրը: Առաջինը մինչև ծնկները պատկերված է Հորդանանի մեջ, երկրորդը, կանգնած է ալիքի վրա: Այդպես մանրանկարիչը ընդձեռն է հրեշտակի հոգևոր արարած լինելը: Մկրտության ժամանակ Հիսուս Քրիստոսը սրբագործում է ջուրը, և այդ սրբությունը փոխանցվում է մկրտողին և սպասավորին:

Հովհաննես Մկրտչի պատկերազրական տիպաբանությունը հետևում է ավանդական կանոնին, սակայն հետաքրքիր լուծում ունի նրա հանդերձը, ավելի ճիշտ՝ վերջինի դեղին գույնը: Նման գույն ունեցող անապատականի հագուստ գրեթե չի հանդիպում հայկական մանրանկարներում: Հովհաննես Մկրտչին շատ հաճախ պատկերում են սևի կամ շագանակագույնի տարբեր երանգներ ունեցող հանդերձով: Այս մանրանկարում, դեղինը օգտագործելով Մեսրոպ Խրզանցին նկատի է ունեցել Հովհաննես Մկրտչի բնակավայրը՝ անապատը:

Պատկերատակի գրության մեջ մանրանկարիչն ասում է, որ Հորդանանում մկրտվելիս Հիսուս Քրիստոսը ջախջախում է վիշապի (սատանայի) գլուխը: Սակայն մանրանկարում նա չի պատկերում վիշապին, ինչպես ընդունված է պատկերազրոններ, ըստ որի վիշապը, պատկերվում է Հիսուսի ոտքերի տակ՝ կապ գցած պոչով: Ջախջախված վիշապն անտեսանելի է, սակայն տեսանելի է նրա կործանման հետևանքը՝ Հորդանանի ջրերում լողացող երեք ձկները, որոնք խորհրդանշում են մարդկանց փրկագնված հոգիները:

**Պայծառակերպություն (3բ)**

(šä<sup>30</sup>Uí<sup>3</sup>é<sup>3</sup>Ī »ñááöĀÇ(óY) չ Ø(nÇëi á)èÇ áñ á<sup>30</sup>Uí<sup>3</sup>é<sup>30</sup>ó<sup>30</sup> Ç Ā<sup>3</sup>maö-ñ<sup>3</sup>Ī<sup>3</sup>Y É»ñÇYŸ · · U<sup>30</sup>Uí »<sup>30</sup>ó ½ÇYüY |)E

«Պայծառակերպություն» մանրանկարի հորինվածքը գրեթե նույն-

39 Ըստ Եկեղեցու Ավանդության Միմեոնը Փրկչի գալստյանն է սպասել 344 տարի:  
40 Սովորաբար «Մկրտություն» տեսարանում պատկերում են երկու հրեշտակ:

նուլթյամբ կրկնում է նախորդը: Այստեղ դարձյալ երեք խորաններ են. կենտրոնականում Հիսուսն է, աջ խորանում՝ Մովսեսը, ձախում՝ Եղիան: Նրանք Հիսուսին այլակերպող հրաշքի մասնակիցներն են: Մանրանկարի ստորին՝ վերնամասից եզրաչերտով տարանջատված մասում աստվածասուլթյան վկաներն են՝ Պետրոսը, Հակոբոսը և նրա եղբայր Հովհաննեսը: Անդրադառնալով Հիսուսի պայծառակերպման ավետարանական պատմությանը՝ Մեսրոպ Խիզանցին հետևել է մի պատկերազրական տարբերակի, որում կան մի շարք նորամուծութուններ:

«Պայծառակերպութուն» տեսարանի ամենից հաճախ կիրառվող պատկերազրական օրինակում Հիսուսը պատկերվում է ճաճանչազարդ Մանդոլայի մեջ, որը Աստծո փառքի նշանակն է<sup>41</sup>: Նրա հագուստները սպիտակ են, որով արտահայտվում է այլակերպության պահը, աջ ձեռքը օրհնության նշանն է ցույց տալիս, իսկ ձախը պահում է Ավետարան կամ գալարափաթեթ: Այս մանրանկարում պատկերազրական այդ հատկորոշիչները բացակայում են:

Հիսուս Քրիստոսը պատկերված է խորանի մեջ, որի խորքը կապույտ աստղազարդ երկինքն է: Այստեղ աստղերը ունեն խորհրդաբանական նշանակութուն: Դրանք երկնային զվարթունքների՝ հրեշտակների, նշանակներն են: Նրա հագին մուգ կարմիր քիտոն է և ծիրանագույն, գոտկատեղի մոտ կապ գցած թիկնոց: Առավել հետաքրքրականը նրա ձեռքերի շարժումներն են՝ աջը ուղղված է վար, ձախը դեպի վեր: Հիսուսի ձեռքերի ուղղվածութունը ինքնանպատակ չէ. այն վերաբերում է Մովսեսի և Եղիայի կերպարներին: Հիսուսը ցույց է տալիս, թե յուրաքանչյուրը որտեղից է եկել Թաբոր լեռ՝ ենթարկվելով աստվածային կամքին: Ըստ Հին Կտակարանի՝ Մովսեսը մեռնում է և թաղվում<sup>42</sup> երկրում, իսկ Եղիան՝ ողջ-ողջ հափշտակվում է երկինք<sup>43</sup> և բնակվում այնտեղ: Նոր Կտակարանում աստվածաշնչական այս երկու կերպարները, յուրաքանչյուրը իր աշխարհից հայտնվում են Հիսուսի պայծառակերպության ժամանակ<sup>44</sup>, որպեսզի խոսեն նրա վախճանի մասին: Լեռան վրա, պայծառակերպված Հիսուսը աշակերտներին հայտնում է իր աստվածային էությունը, ի ցույց է դնում, որ ինքն է Տերը երկնքի ու երկրի, որ իշխանություն ունի կյանքի ու մահվան վրա:

Մանրանկարի ստորին հատվածում Հիսուսի աշակերտներն են՝ որոնց խումբը խորհրդանշում է մարդու և մարդկության երեք հասակը. Պետրոսն ալեհեր է, Հակոբոսը միջին տարիքի, իսկ Հովհաննեսը՝ պատանի: Պետրոսն ու Հովհաննեսը ծնրադիր են պատկերված, Հակոբոսը՝ անկման պահին: Պետրոսի ձեռքը ուղղված է դեպի Հիսուսը, ինչ խորհրդանշում է նրա խոսքերը պայծառակերպության պահին՝ «Վարդապետ, լաւ է, որ մենք այստեղ ենք. երեք տաղալար չինենք, մէկը՝ քեզ, մէկը՝ Մովսէսի եւ մէկը՝ Եղիայի համար»<sup>45</sup>: Մյուս երկուսը ձեռքով փակել են աչքերը չգիմանալով այլակերպող լույսի ճառագմանը:



41 Հանդիպում է նաև «Համաբարձում» մանրանկարում:  
 42 Բ Օրոնք ԼԴ 5-6:  
 43 Դ Թազ. Բ 11:  
 44 Մատթ. ԺԷ 1-13, Մարկ. Թ 1-12, Դուկ. Թ 28-36:  
 45 Դուկ. Թ 33:



սի ոտքերի տակ բնությունը խորհրդանշող դեկոր է, որի մեջ տատասկ է պատկերված: Մեսրոպ Խիզանցին հուշում է, որ սկսվում է Նրա Չարչարանաց ուղին:

**Մուտք Երուսաղեմ (4բ)**

(Տ| ³Ō| ³½³ñ¹Ÿ չ ½áñ ∅(ñÇëi á)ë Ū³ó³Ÿ³| ³ó »| ³ó Ç ù³Ō³ùŸ °(ñáó-ë³Ō)չՍ, ÁŸ¹ ³é³ç »ÉÇŸ!)É

Աշակերտների ներկայացման նույն սկզբունքն է կիրառված նաև «Մուտք Երուսաղեմ» մանրանկարում: Ավանակին նստած Հիսուսին<sup>48</sup> հետևում են Հովհաննեսը, Պետրոսն ու Հակոբոսը, որոնց ձեռքերի շարժումները նույնն են: Տարբեր է միայն Հիսուսինը, որն այստեղ օրհնության նշանով է: Նույնն է նաև այն վերընթացը, որ նախորդ մանրանկարում գտնվում են Հիսուսն ու աշակերտները:

Հորինվածքը բաժանված է երկու փոխթափանցող մասերի: Ավանակի գլուխը գտնվում է Հիսուսին դիմավորողների տարածքում, իսկ հագուստը, որի վրայով անցնում է ավանակը՝ Երուսաղեմ մտնողների: Հիսուսն ու աշակերտները, ինչպես նաև Երուսաղեմն ու Մարզու Որդուն դիմավորող ժողովրդին խորհրդանշող, արմավենու ճյուղեր բռնած երկու քահանաները, պատկերված են ալիքաձև բաժանարարներից անդին: Միջանկյալ տարածքում Մեսրոպ Խիզանցին նկարել է հագուստ փռող պատանուն և ծառ, որի սաղարթին դիմավորողներից մեկի ֆիգուրն է:


Ծառի պատկերումը գալիս է ավետարանական բնագրից<sup>49</sup>, որտեղ, դիմավորողները ծառերից ճյուղեր են պոկում և գցում Հիսուսի ոտքերի տակ, բայց ծառ բարձրացած մարդու մասին խոսք չկա: Այս դրվագի բացատրությունը հետևյալն է:

Մեսրոպ Խիզանցու մանրանկարում ծառը պտղատու է՝ ճյուղերից թղեր են կախ ընկած. ուրեմն դա թղենի է: Ըստ Ղուկասի Ավետարանի, Հիսուսը Երուսաղեմ է գնում Երիքովի ճանապարհով: Երիքովում էր ապրում Ջակքեսոս մաքսապետը, որ շատ կարճահասակ էր, և Հիսուսին տեսնելու ու մեղքերից թողություն ստանալու բռնուց ցանկությունից մղված բարձրացել էր ժանտաթղենու վրա՝ արժանանալով Հիսուսի ուղադրությունը, և փրկվել<sup>50</sup>:

Մեսրոպ Խիզանցին այս դրվագը ներմուծել է «Մուտք Երուսաղեմ» տեսարանի ցույց տալու համար ոչ միայն այն ճանապարհը, որ անցնում է Հիսուսը, այլ նաև թե ինչի համար է Նա գալիս Երուսաղեմ. «...Փնտռելու եւ փրկելու կորածին»<sup>51</sup>: Եվ կրկին Նրա ոտքերի տակ տատասկներ են, քանի որ փրկությունը, որ տալու է Հիսուսը, լինելու է սեփական արյան գնով: Տատասկները նախանշում են դեպի Գողգոթա տանող ճանապարհը: Իրադարձությունների նախընթացին ծանոթացնելով՝ Մեսրոպ Խիզանցին միաժամանակ՝ տանում է դիտողի հոգևոր հայեցողությունը դե-



48 Մեսրոպ Խիզանցին «Մուտք Երուսաղեմ» տեսարանում օգտագործել է այն պատկերագրական տարբերակը, որտեղ բացակայում է ավանակին ուղեկցող քուռակը:  
49 Մատթ. ԻԱ 8, Մարկ. ԺԱ 8:  
50 Ղուկ. ԺԹ 1-10:  
51 Ղուկ. ԺԹ 10:



պի այն դեպքերը, որոնք տեղի են ունենալու Հիսուսի Երուսաղեմ գալուց հետո:

Մանրանկարի գունային միջավայրն արտակարգ նեղաշնակ է: Հիսուսի և աշակերտների դեղին լուսապսակները կարծես խոսում են հանդիպակաց կանաչի հետ:

**Ոսնլվա (5ա)**

(Տàì Ý³Éáð³ÙÝ շ ½áñ ø(ñÇèì á)è Éáð³ó ½áì è ³ß³Ì »ñì ³ó ·· Ýèì »³ÉÇ í »ñÝ³ì áóÝ |)É (Éáðè³ÝóúáóÙ Ì³ ³ÝÁÝÃ»éÝ»ÉÇ · ñáðÃúáóÝ)

Մարանկարչական գեղեցիկ հորինվածք է «Ոսնլվան»: Արարողությունը տեղի է ունենում Վերնատանը, այն վայրում, ուր հավաքվում էին Հիսուսն ու աշակերտները Երուսաղեմում: Վերնատունը մանրանկարչի պատկերացմամբ եկեղեցանման, երկխորան, եռագմբեթ կառույց է: Հորինվածքի ընդհանուր խորքը աստղազարդ երկինքն է, որն այս դեպքում խորհրդանշում է գիշերը<sup>52</sup>, այն ժամանակահատվածը, երբ տեղի է ունեցել առանձնահատուկ այս ծեսը:

Առաջին խորանում, բեմի վրա<sup>53</sup>, Հիսուս Քրիստոսն է՝ ծնրադիր, առանց թիկնոցի, իսկ երկրորդում՝ աշակերտների բազմությունն է, որոնցից առաջին երեքն են պատկերված ողջ հասակով<sup>54</sup>: Պետրոսը հորինվածքի կենտրոնում է՝ դեղին խորքի վրա: Նա նստած է գահավորակին՝ աջ ձեռքով ցուցանում է իր գլուխը, իսկ աջ ոտքը մեկնել է Հիսուսին: Վերջինս սրբիչը ձեռքին կատարում է սրբազորձող այդ լվացումը՝ եկեղեցական սկիհ հիշեցնող լայնաբերան թասի մեջ: Մանրանկարի ճարտարապետական դեկորն ու կերպարների դասավորությունը շատ համաչափ են ու ներդաշնակ: Ավանդական պատկերագրություն ունեցող այս մանրանկարում հետաքրքրականը Պետրոսի եռոտ գահավորակի տեսքն է: Նստոցը գտնվում է երկու խորանների հորիզոնական միացման երիզի վրա, իսկ ոտքերը երիզի տակ են: Տեսողաբար՝ Պետրոսի գահավորակը ճախրում է օդում:

**Հիսուսի մատնությունն ու ձերբակալությունը, Պետրոսի ուրացումը (5բ)**

(ՏÀÙմéÝáóÙÝ ø(ñÇèáé)Ç ½áñ Úáó¹³Ù Ñ³Ùմáðñ»Éáì Û³ì Ý»³ó ·· Ññ³ÙսÝ Ì³É³Ý)É

Մանրանկարը բաղկացած է երկու առանձին տեսարաններից: Վերինը Հուդայի մատնության և Հիսուսի ձերբակալության զրվագն է, ստորինը՝ Պետրոսի ուրացման: Ավետարանական այս դրամատիկ իրադարձությունները յուրօրինակ գեղարվեստական ու խորհրդաբանական լուծում են ստացել Մեսրոպ Խիզանցու մանրանկարում<sup>55</sup>:

52 Աստղազարդ երկնքի հատվածներ Մեսրոպ Խիզանցին պատկերել է նաև «Պայծառակերպություն» և «Ղազարոսի հարությունը» մանրանկարներում, որոնք չեն առնչվում օրվա ժամի հետ:  
 53 Բեմը ներկայացված է զարդաշյուս գեղեցիկ ուղղանկյան տեսքով:  
 54 Աշակերտները՝ տասներկուսն են, եթե հաշվենք նաև Պետրոսին, ստացվում է տասներեք:  
 55 Սա ձեռագրի միակ մանրանկարն է, որտեղ Մեսրոպ Խիզանցին մեկտեղել է ավետարանա-

Առաջին մանրանկարի հորինվածքի տեսողական ու գաղափարական կենտրոնը Հիսուսն ու Հուդա Իսկարիովտացին են: Հիսուսը պատկերված է սլացիկ հասակով, երկնագույն քիտոնով և կարմադեղնավուն թիկնոցով: Նրանից աջ և ահյակ կալանող զինվորների խմբերն են՝ յուրաքանչյուր կողմից երեքը: Ձերբակալութունը տեղի է ունենում Գեթսեմանի այգում, որի պատկերագրական արտահայտիչը հորինվածքի ստորին մասում կանաչ կետիկներով պատված հատվածն է՝ խոտը: Ջինվորներից երկուսը բռնել են Հիսուսի թիկնոցից ու ձգում են յուրաքանչյուրն իր ուղղությամբ: Նրանց այս շարժումով Մեսրոպ Խիզանցին արտահայտել է բուն կալանումը: Սակայն հորինվածքի այս հատվածում հետաքրքրականը զինվորների բռնած ու վեր պարզած զենքերն են: Ջարմանալի է, որ Մեսրոպ Խիզանցու պատկերած զենքերը որևէ առնչություն չունեն ավետարաններում նկարագրվածների հետ<sup>56</sup>: Նրա մանրանկարած զինվորներից չորսը նիզակակիր են, իսկ մյուս երկուսի բռնածը զենքին հատուկ ձև չունի: Այդ երկար ձողերը վերնամասում պսակվում են լայնաբերան, փոքր թասեր հիշեցնող առարկաներով: Այսպիսիք հանդիպում են միայն «Խաչելութուն» տեսարանում. նիզակը, որով խոցում են Հիսուսի կողը, և թասը որով Հիսուսին են մատուցում քացախը: Այդպիսիք պատկերված են նույն այս Ավետարանի «Խաչելութուն» մանրանկարում: Մինչդեռ ավետարանների բնագրերում Հիսուսի խաչելության ժամանակ նրան քացախ են մատուցում եղեգին հագցրած սպունգով<sup>57</sup>: Ուրեմն ի՞նչ նկատի ունի Մեսրոպ Խիզանցին՝ սպունգը փոխարինելով թասով:



Գեթսեմանի պարտեզում կատարվող իրադարձությունները շատ խորհրդավոր են: Հաղորդության խորհուրդը հաստատելուց հետո, Հիսուսը իր աշակերտների հետ բարձրանում է Ձիթենյաց լեռ: Հուդան նրանց հետ է. նա գիտի Ուսուցչի ուր գնալը և պիտի մատնի: Գեթսեմանիում Հիսուսը մարգարեանում է. նրա ձերբակալվելուց հետո աշակերտները գալթակղվելու են, իսկ Պետրոսն՝ Իրեն ուրանալու է երեք անգամ: Սակայն այս պատմության կիզակետը Հիսուսի հոգեվիճակն է: Նա Գեթսեմանիում մարդկայնորեն ապրում է սպասվող չարչարանաց և մահվան սարսափը, որը արտահայտում է աղոթքում. «Հա՛յր, եթէ կամենում ես, այս բաժակը ինձնից հեռացրո՛ւ, բայց ոչ թէ իմ կամքը, այլ քո՛նը թող լինի»<sup>58</sup>: Նա խմում է այդ բաժակը խաչի վրա: Մեսրոպ Խիզանցին այս մանրանկարում կրկին ժամանակը տանում է առաջ՝ նախապես ծանուցելով Քրիստոսի մահը: Ձողերին հագցրած թասերը «Մատնութուն» տեսարանում, և սպունգին փոխարինող թասը «Խաչելութունում» նույնանում են, դառնում են այն դառը բաժակը, որ Հիսուսը կամովին խմում

կան երկու տարբեր, սակայն իրար լրացնող պատմություններ:

56 Ըստ ավետարանների իրեական ամբողջ գալիս է Յիսուսին ձերբակալելու զինված սերբով ու մահակներով (Մատթ. ԻՁ 47, Մարկ. ԺԳ 43, Ղուկ. ԻԲ 53), իսկ Յովհաննու Ավետարանում ամբողջ զինված է. «ջախերով, լապտերներով ու զենքերով» (Յովհ. ԺԸ 3): Յովհաննես Ավետարանչի մոտ զենքերի տեսակները նկարագրված չեն, իսկ ձերբակալողները հռոմեացի զինվորներն են:

57 Մատթ. ԻՁ 48, Մարկ. ԺԵ 36, Յովհ. ԺԹ 29: Շատ հաճախ «Խաչելություն» տեսարանում պատկերվում է երկար ձողին հագցրած սպունգ:

58 Ղուկ. ԻԲ 42: Ղուկաս Ավետարանիչը այսպես է նկարագրում Յիսուսի վիճակը Գեթսեմանիում. «Նա տագնապի մեջ էր եւ ամբողջ հոգով էր աղօթում: Եւ նրանից քրտինքը հոսում էր արեան կաթիլների նման՝ շիթ-շիթ գետին թափուելով» (ԻԲ 43-44):



է Հանուն Իր առաքելութեան իրագործման:

«Մատնութիւն» մանրանկարում զարմանալին Հուդայի կերպարն է: Մատնիչի նմանօրինակ ներկայացում հազվագեղ է Հանդիպում: Նորութիւնն է, որ Մեսրոպ Խիզանցին նրան պատկերել է Հիսուսի գոտկատեղին հավասար: Միջնադարյան արվեստում Հուդային փոքրահասակ պատկերելով՝ ցույց են տալիս նրա փոքրոգութիւնն ու դավաճանութեան ողջ զգալիութիւնը: Նրան պատկերում են կիսադեմ, տգեղ, երբեմն գրոտեսկի հասնող աղավաղված դիմագծերով: Այդպիսի պատկերագրական տարբերակներում Հիսուսի այտը համբուրելիս՝ նա լիովին, անզեղ ու ստորաբար գիտակցում է, թե ինչ է անում:

Մեսրոպ Խիզանցու պատկերագրած Հուդան դուրս է ներկայացման ընդունված կանոններից: Նա ձախ ձեռքով բռնել է Հիսուսի ձախ ձեռքը, աջ ձեռքով Հիսուսի աջը և հպելով դեմքին՝ համբուրում է: Հուդայի հայացքը պատկերից դուրս է: Նա կարծեց երկյուղում է Հիսուսի դեմքին նայել: Հուդան նման է մի մոլորված մանկան, ով չգիտի, թե ինչ է անում: Մանրանկարիչը ներկայացնում է ոչ թե դավաճան Հուդային, այլ զղջացող:

Հիսուսի կերպարը համահունչ է մատնիչի ակնկալիքին: «Հայր, ների՛ր դրանց, որովհետեւ չգիտեն, թէ ինչ են անում<sup>59</sup>», - ասելու է Նա խաչի վրա:

«Պետրոսի ուրացումը» մանրանկարն ունի պարզ հորինվածք: Կենտրոնում, բաժանարար ալիքաձև երիզների մեջ պատկերված են երկու ծնրադիր կին: Նրանց դիմաց, մանրանկարի ձախ անկյունում Պետրոսն է, որի ուղղությամբ կանայք պարզել են ձեռքերը: Այդ շարժումը պատկերաբանական արտահայտիչն է նրանց և Պետրոսի զրույցի ու Հիսուսի աշակերտին ուղղված մեղադրանքի: Կանայք պնդում են, որ Պետրոսը Հիսուսի կողմնակիցներից է, իսկ նա երեք անգամ ուրանում է Ուսուցչին<sup>60</sup>: Պետրոսը հայացքն ու ձեռքը ուղղել է վեր՝ դեպի Հիսուսը: Այդպես մանրանկարիչը հորինվածքային ու ներքին բովանդակային կապ է ստեղծել երկու տարբեր, սակայն իմաստով իրար լրացնող պատկերների միջև:

Լուսանցքում պատկերված աքաղաղը նույնպես կապող օղակ է մանրանկարների միջև: Աքաղաղը նաև իմաստային լիցք է կրում. խորհրդանշում է Պետրոսի ուրացումներն ըստ Ավետարանների, և Հիսուսի ապագա հարութիւնը:

**Խաչելութիւն (6ա)**

(SĒ 3ã»ĒáõÃÇ(ò)Ý ø(ñÇi' èáè)Ç ½áñ Ç í («)ñ(3Ù) · ĒĒáÙÝ 2 1 3 [Ù3]Ù Ē 3ã »Ē3õ í (3)è(Ý) Û»ñ |), (Ñ3Ýó3ã3ñi' áóÃÙ3Ý · ÇñAª Sè3Ù ĸ Ā(3) · (3óá)ñ Ññ;Çó |)Ē

«Խաչելութիւն» մանրանկարը հետևում է պատկերագրական համառոտ տարբերակին<sup>61</sup>: Այս տեսարանում Մեսրոպ Խիզանցին կրկին դիմել

59 Ղուկ. ԻԳ 34:  
60 Մատթ. ԻԶ 57-58, 69-75, Մարկ. ԺԴ 53-54, 66-72, Ղուկ. ԻԲ 54-62, Յովի. ԺԸ 12-18, 25-27:  
61 Խաչելութեան համառոտ պատկերագրական տարբերակում պատկերվում են միայն Հիսուս-

է հորինվածքի կազմակերպման երկխորան տարբերակին: Խաչված Հիսուսը կենտրոնում է: Նրանից աջ ու ձախ, խորանների մեջ պատկերված են Մարիամ Աստվածածինն ու Հիսուսի սիրելի աշակերտ Հովհաննեսը: Խորաններից դուրս, մերձ Հիսուսին, տեղափոխված և քաջախոյ պսունգը Նրա բերանին մոտեցնող զինվորներն են: Մանրանկարի դոմինանտը խաչափայտն է, որի հորիզոնական խաչաթևը հենվում է խորանները ավարտող կամարների վերնամասին, կազմավորելով մանրանկարի ներքին հորինվածքի գլխավոր հատվածը: Ավելի վեր՝ մարդադեմ ներկայացված՝ արևն ու լուսինն են<sup>62</sup> «Խաչելություն» մանրանկարի անբաժանատրիբուտները: Մանրանկարի շրջանակի վերին երիզի վրա Մեսրոպ Խիզանցին պատկերել է Հավալունի թռչնին և նրա երեք ձագերին:



Սովորաբար, «Խաչելություն» տեսարանում մանրանկարիչները տարբեր ձևերով են պատկերագրում Գողգոթան: Հիմնականում այդ բարձունքը ներկայացվում է խաչափայտի հիմքի տակ գտնվող եռաստիճան պատվանդանի տեսքով:

Այս մանրանկարում Մեսրոպ Խիզանցին Գողգոթան ներկայացրել է շատ հետաքրքիր լուծումով: Այն մի ուղղանկյուն երիզ է, որին հենվում են Հիսուսի գամված ոտնաթաթերը: Գողգոթայի բարձրությունը ցույց է տրված զինվորների միջոցով, որոնք պատկերված են գետնից կտրված, աներևույթ բարձունքի վրա:

Հիսուսի ոտնաթաթերի հարևանությունը Ադամի գանգն է և ոսկորները<sup>63</sup>: Գողգոթան խորհրդանշող ուղղանկյունում վրա տատասկներն են՝ որպես Հիսուսի չարչարանքների ու խաչելության կատարման խորհրդանիշ: Հավալունի թռչունը, որի պատկերումը «Խաչելության» մեջ տարածված է հատկապես Վասպուրականի մանրանկարներում, խորհրդանշում է Հիսուս Քրիստոսին<sup>64</sup>:

Նա մարմնով խաչի վրա է, իսկ հոգով գտնվում է դժոխքում և ավերում է այն<sup>65</sup>:

#### Դժոխքի ավերումը (6բ)

(§2 օ»նաօՍՄ 1ÁáÈáօ ½án օ(ñÇëi á)è Û³ ñ»³օ ·· ³½³i »³օ ½² 1³ Û ·· ½օօ³ Û!)£

Մանրանկարի հորինվածքի կազմակերպման սկզբունքը տարբեր է մյուս բոլոր պատկերներից՝ ազատ է ու անկաշկանդ: Բացակայում են հորինվածքը կազմավորող հորիզոնական և ուղղահայաց բաժանարար երիզները, կերպարները դասավորված են չափազանց համամասնորեն:

սը, Մարիամն ու Յովհաննեսը, և մեկ կամ երկու զինվոր:

62 Արևի և լուսնի պատկերագրության մասին տես՝ Ն. Ղարիբյան, Արևի և լուսնի պատկերագրությունը խաչելության տեսարանում, «Հայացք Երևանից», 1995 թ., փետրվար, էջ 106-115:

63 Ավանդաբար համարվում է, որ Հիսուս Քրիստոսը խաչվել է հենց Ադամի գերեզմանի վրա:

64 Միջնադարում համարվում էր, որ Հավալունին իր քաղցած ձագերին կերակրում էր սեփական մարմնի կտորներով ու արյամբ: Այդպես էլ Հիսուս Քրիստոսը էր որդեգիրներին եկեղեցուն, կերակրում է Հաղորդելով էր Մարմնին ու Արյանը:

65 «Նա թեպետև մարմնով մեռաւ, բայց կենդանի է Հոգով, որով եւ գնաց քարոզեց բանտում եղած ... հոգիներին...» (Ա Պետրոս Գ 18-19): Պետրոս Առաքյալը խոսում է դժոխքի ավերման մասին:



Այս մի մանրանկարում, Մեսրոպ Խիզանցին փոխել է նաև պատկերի շրջանակի ձևը. բոլոր նախորդ մանրանկարներում այն երկերիզ է, այստեղ, հորինվածքի կեսից ցած, շրջանակը մեկական երիզ ունի:

Տեսարանի կենտրոնում Հիսուսի սլացիկ կերպարն է խաչը ուսին: Նա կանգնած է դժոխքի կոտորված, խաչաձև ընկած դռների վրա, որոնք նշանակն են ավերման ու մահվան կուլ գնացած հոգիների ազատման:

Դժոխքի տարածքի խորքը սև գույն ունի: Մանրանկարի վերին, ավելի փոքր հատվածը Երկինքն է, որը գունավորված է դեղինով, և Հիսուսի թիկնամասից այդ դեղինը ներթափանցում է դժոխքի ոլորտ՝ հասնելով մինչև Փրկչի քիտոնի փեշի երիզը: Դեղինը՝ աստվածային լույսի գունային նշանակը, ճեղքում է դժոխային խավարը՝ տեսանելի դարձնելով Բարու և Հարի հակադրությունը, նաև արտահայտելով հաղթանակը վերջինի նկատմամբ: Այդ հաղթանակին մասնակից են նաև երկնային զորությունները՝ հրեշտակները, որոնցից մեկը պատկերված է մանրանկարի վերին աջ անկյունում կապույտ սեգմենտի (հատված) մեջ, մյուսները ներկայացված են խորհրդաբանորեն՝ աստղերի կերպարանքով:

Հիսուսից աջ ու ձախ տեղադրված են դժոխքի բնակիչների երկու տարբեր խմբերը: Առաջինը Ադամն ու Եվան են, որոնց և Քրիստոսը հանում է դժոխքից: Նրանք պատկերված են լուսապսակներով, գունեղ հագուստներով, և թվում է թե Հիսուսի բերած լույսը փոխանցվել է նրանց: Նույնիսկ օձը, որ պատկերված է նախաստեղծների հարևանությունում՝ դեղին է: Հիսուսը բռնել է Ադամի ձեռքը և բարձրացնում է նրան: Եվան բռնել է Ադամի գոտկատեղից և նրանով մասնակից է փրկությունը: Ադամն ու Եվան դուրս են բերվում նախկին անկյալ վիճակից: Հիսուսը վերձիգ շարժումով միաբանվում է նրանց հետ գաղափարական և հորինվածքային մեկ միասնական խմբի մեջ, և հակառակը, թիկունքը դարձրել է մյուս՝ ձախակողմյան խմբին, որը գտնվում է մթան մեջ, զրկված Նրա ողորմածությունից: Տեսողաբար, լույսի մեջ գտնվողները գալիս են առաջին պլան, խավարում մնացածները՝ կարծես հեռանում են դժոխքի խորքը:

Մեղավորներն, որոնք թվով երեքն են, պատկերված են բոլորովին մերկ, գալարվող օձի պոչի ներքո: Նրանք կապանքների մեջ են: Որդերը, որ սողում են նրանց մարմնով մեկ՝ նշանակն են անասելի տանջանքների: Այս մանրանկարում Մեսրոպ Խիզանցին անդրադառնում է արդարների և մեղավորների խնդրին: Մեղքերի համար զղջացողները արդարանում են ու փրկվում, անզեղները՝ դատապարտվում են հավիտենական տանջանքների:

**Հարուժյուն (7ա)**

(ՏՊ]»ñ»½Ù³ÝÝ Ծ(ñÇëï áë)Ç ·· Éáöë³ ÷ ³ÙÉ Ññ»ßì ³ ÌÝ Ç í (»ñ)³Ù í ÇÙÇÝ ·· [Çö]áöÖ³ μ»ñÇó Ì³Ý³ [Ù]üÝ ·· á³Ñ³ á³ÝüÝ áöß³ Ä³ ÷»³É! ]É

«Հարուժյուն» մանրանկարի երկմաս հորինվածքը կրկնում է «Պայծառակերպություն» և «Մատնություն» պատկերները<sup>66</sup>: Մանրանկարի

66 Նմանօրինակ է նաև «Հոգեգալուստ» տեսարանը:

վերին, ավելի մեծ հատվածում Հիսուսի հարուժյունը ավետող հրեշտակն է, յուզաբեր կանայք և գերեզմանը: Ստորին հատվածում, բաժանարար երիզից ցած, գերեզմանի քնած պահապաններն են:

Այս պատկերազրական տարբերակը ծագում է Մատթեոսի ու Մարկոսի ավետարաններից: Ըստ Մատթեոս Ավետարանչի, հրեշտակը՝ երկնքից իջնելով, Հիսուսի գերեզմանը փակող վեժը գլորում է մի կողմ և նստում վրան<sup>67</sup>: Մարկոսը, գրում է, որ գերեզման են գալիս Մարիամ Մագդաղենացին, Հակոբոսի մայր Մարիամը և Սողոմեն<sup>68</sup>: Այդպես է պատկերված և Մեսրոպ Խիզանցու մանրանկարում: Հրեշտակը նստած է վեժին, և երեք կանայք կանգնած են նրա դիմաց՝ լսելով երկնային պատգամաբերի խոսքերը:

Մարիամ Մագդաղենացին կանգնած է հրեշտակի անմիջական հարևանությամբ, Հակոբոսի մայր Մարիամը Մագդաղենացու կողքին է, իսկ Սողոմեն՝ նրանց թիկունքում: Առաջին երկուսի ձեռքերում մանրանկարիչը պատկերել է մեռածի մարմինն օժելու համար անհրաժեշտ պարագաները: Հրեշտակի գլխավերևում մեզ արդեն ծանոթ բացված վարագույրն է, նրա ոտքերի տակ՝ բարձ է պատկերված, որ նշանակն է արքայական գահի: Զվարթունի սպիտակ թիկնոցը նույնպես անմիջականորեն առնչվում է Ավետարանի բնագրին<sup>69</sup>:

Հրեշտակից ձախ մանրանկարիչը պատկերել է Հիսուսի գերեզմանը՝ գմբեթավոր տաճարիկի տեսքով: Այդ կառույցի ներսում թափուր կտավներն են, որոնցով պատանել էին մեռած Հիսուսին: Մեսրոպ Խիզանցին դրանք գծագրել է առկայծող սպիտակ գծով: Տաճարիկի գմբեթի ներսից կախ է ընկած մի կանթեղ<sup>70</sup>: Մանրանկարի վերնամասի խորքը կապույտ աստղազարդ երկինքն է, որը ցույց է տալիս Հիսուսի հարուժյան ժամանակը՝ գիշերը:

Երեք զինվորները՝ գերեզմանի պահապանները, ներկայացված են քնած, անկանոն տափարակված գետնին, զենքերը ցիր ու ցան, որպես հետևանք հրեշտակի զարհուրելի տեսիլքի<sup>71</sup>:

### Համաբարձում (7բ)

(§Ծ³ Ȫμ³ ñ0á0ȪŸ Ȫ(ñÇëi áè)Ç áñ Ñ³ Ȫμ³ ñ0³0 0»ñi ÇŸë ·· ³β³i »ñi ùŸ ³ áá0β ŸŸ³ 0ÇŸ |)É

«Համբարձում» մանրանկարը տողորված է հաղթական տրամադրությամբ: Այս մանրանկարի ընդհանուր հորինվածքը գրեթե կեսից բաժանված է հորիզոնական երիզով: Պատկերի ստորին հատվածի կենտրոնում

67 Մատթ. ԻԸ 2:

68 Մարկ. ԺԶ 1:

69 «Նրա տեսքը փայլակի ցման էր, ու նրա զգեստը՝ սպիտակ, ինչպես ծիւնը» (Մատթ. ԻԸ 3):

70 Չիսուսի գերեզմանը տաճարիկի տեսքով ներկայացնելիս, միջնադարյան արվեստագետները նկատի ունեն այն կառույցը, որ Դ դարի սկզբում կանգնեցրել էր Կոստանդինոս կայսրը՝ Չիսուս Քրիստոսի թաղման վայրում: Տաճարիկի կանթեղը ակնարկում է, որ դա Չարոփյան տաճարն է: Ավելի մանրամասն տես՝ Biddle M., The Tomb of Christ, Stroud, 1999. Wilkinson T., The Tomb of Christ: Outline of its Structural History, Levant (Journal of the British School of Archeology in Jerusalem), 4, 1972, pp. 83-97.

71 Պահապանների գեմքերը հավանաբար կրկնում են Մեսրոպ Խիզանցու ժամանակ կիրառվող գեմքերի արտաքին տեսքը:





Սուրբ Աստվածամայրն է, ում շուրջ խմբվել են Հիսուսի աշակերտները, յուրաքանչյուր կողմում վեցը<sup>72</sup>: Վերին Հատվածում, Աստվածամոր գլխավերևում, գմբեթով պսակված ձվաձև Մանդոուլայի մեջ կանգնած է Հիսուս Քրիստոսը<sup>73</sup>:

Հորինվածքային այս ուղղահայացը հավաքում և միավորում է բոլոր գործող կերպարներին: Մանդոուլայի շուրջ բոլորը խմբվել են ութ հրեշտակներ: Մեսրոպ Խիզանցին պատկերել է միայն նրանց մեկական թևը, կիսադեմերը և վարի հրեշտակների մեկական ձեռքերը: Հրեշտակները խորհրդանշում են Հիսուսի մուտքը երկնային ոլորտներ: Քրիստոսը իր Հարուցյալ Մարմինը տանում է հրեշտակաց դասերի միջով<sup>74</sup>, և այդ հոգևոր ճանապարհը Նա անցնում է նստելու համար Հոր Աջ կողմում<sup>75</sup>: Այդպիսով, հրեշտակները ոչ թե տանում են Նրան, ինչպես թվում է տեսողաբար, այլ ուղեկցում ու ղեմավորում են յուրաքանչյուրն իր դասում:

Մանդոուլայի ցածի երիզից դեպի աշակերտներն են իջնում ծիածանակերպ զանազանագույն ճաճանչներ: Նրանց և Ս. Աստվածամոր կերպարները այնպես են տեղաբաշխված<sup>76</sup>, որ գլուխների հաջորդական դասավորվածության միջոցով ստացվել է շարժունակ, պսակաձև խմբանկար: Միասնական այս խմբում Հիսուսի աշակերտները բռնել են մեկ-մեկու և երկյուղածորեն հարում են Եկեղեցու խորհրդանիշ՝ Աստվածամորը: Սուրբ Հոգու գալստով սրբագործված աշակերտներն այլևս կոչվելու են առաքյալներ, և քրիստոնեություն քարոզելով պիտի արժանանան հաղթության պսակին, այսինքն պետք է հաղթեն հոգևոր պատերազմում:

**Հոգեգալուստ (Ցա)**

(§² 0³ 0Ÿ³ ı »ñâ Ðá· ÇŸ ·· Ññ»Ō;Ÿ Է»½á0Ÿ Çç³ 0 Ç ë(á0ñ)µ 0³ é³ù»³ Էë !)Է

Եկեղեցու և առաքելականության թեման շարունակվում է «Հոգեգալուստ» մանրանկարում, որ կրկին հորիզոնական երիզով բաժանված է երկու մասի: Խորհրդավոր այս իրադարձությունը տեղի է ունենում Երուսաղեմի Վերնատանը, որը Մեսրոպ Խիզանցին ներկայացրել է քառակամար շինության տեսքով: Մանրանկարի այս հատվածի խորքի գունավորումը՝ երկնագույնը և սպիտակի հետ նրբորեն համադրված մանուշակագույնը, տեսողապես զուգադրվում են կամարների տակից կախ ճրագակալներին, որոնցից կենտրոնականները թույլ առկայծող լույսի պատրանք են ստեղծում: Նմանապես, Սուրբ Հոգին խորհրդանշող հրեզեն լեզուները, որ իջնում են առաքյալների վրա, տպավորում են իրապես խորհրդապաշտական մի տարածք:

**Առաքյալները ծնրադրել են Սուրբ Սեղանի առջև, որի վրա դրված է**

72 Տրամաբանորեն աշակերտները «Համբարձում» տեսարանում պիտի լինեն տասնմեկը, քանի որ ինքնասպան եղած Հուդայի փոխարեն Մատթայի ընտրությունը, տեղի է ունեցել Հիսուսի համբարձումից հետո (Գործք. Ա 26): Մեսրոպ խիզանցին, պատկերելով տասներկու աշակերտ, առաջնորդվել է վաղագույն պատկերագրության և հորինվածքում նրանց ֆիգուրներն ու գլուխները համաչափ դասավորելու պահանջով:

73 Ավելի հաճախ, «Համբարձում» տեսարանում Հիսուսը պատկերվում է նստած:

74 Հրեշտակաց դասերը ինն են, սակայն Մեսրոպ խիզանցին նրանցից ութին է պատկերել՝ հավանաբար հանուն հորինվածքի համաչափության:

75 Եբր. Ա 3:


76 Բարձր և ցածր:

Հաղորդութեան Սկիզբ: Սեղանից աջ ու ձախ, խնդրարկուի դիրքով, երկու առաքյալներ են, թերևս՝ Պետրոսն ու Հակոբոսը: Մանրանկարի այս հատվածում առաքյալների թիվը տասն է, մյուս երկուսը գտնվում են ցածի մանրանկարում, որը պատկերում է քրիստոնեութեան առաջին նորարարձների պատմությունը:

Այստեղ երկու առաքյալ<sup>77</sup>, պահում են մի կլորակ, որի մեջ հեթանոսներին խորհրդանշող մարդադեմ և շնադեմ հայտնի կերպարն է: Առաքյալների ոտքերի մոտ կրկին հայտնվում են տատասկները, որպես նշանակ առաքելական գործունեության հալածանքներով ու վտանգներով լի՝ չարչարանաց ճանապարհի, որն ավարտվելու է՝ նահատակութեամբ:

**Երկրորդ գալուստ (Ցբ)**

(ΣΕ<sup>3</sup>αΥ̅ ι̅ (ζ)̅η̅α̅ο̅Υ̅<sup>3</sup>Ι̅<sup>3</sup>Υ̅Υ̅ ·̅ ÷̅α̅Ο̅υ̅ ̅ϩ̅μ̅η̅ζ̅Ξ̅»<sup>3</sup>Υ̅υ̅ ̅α̅ñ̅ Ñ̅Υ̅α̅»̅Υ̅ ·̅ ·̅<sup>3</sup>Υ̅<sup>3</sup><sup>3</sup> ̅13̅ι̅<sup>3</sup> ̅3̅ε̅ι̅<sup>3</sup> ̅3̅Υ̅!̅)̅ (Ξ̅α̅ο̅ε̅<sup>3</sup>Υ̅ο̅υ̅α̅ο̅Υ̅<sup>3</sup> Σ̅ι̅ ζ̅ñ̅ ε̅ι̅ »̅÷̅<sup>3</sup>Υ̅Υ̅α̅ε̅!̅, Σ̅Ι̅ά̅(̅Ο̅<sup>3</sup>)̅Ι̅(̅ζ̅ο̅Υ̅)̅ Ü̅<sup>3</sup>-̅ñ̅ζ̅(Υ̅)̅!̅)




«Սուրբ Ծաղիկ Ավետարանի» մանրանկարների Վախճանաբանական թեման սկսվում է «Երկրորդ գալուստ» պատկերով<sup>78</sup>: Նկարադաշտի ողջ տարածքը զբաղեցնում է Տերունական խաչը, որի հորիզոնական խաչափայտի երկու ծայրերն ու ուղղահայացի գագաթը կպած են մանրանկարի շրջանակին, և զարդանախշերով նույնանալով մեկ մեկու՝ ձուլվել են շրջանակի հետ: Այս հսկա խաչի բունը դրված է հնգաստիճան պատվանդանին՝ Գողգոթային: Խաչի կենտրոնում, կլորակի մեջ, Նոր Կտակարանը գրկած նստած է Հիսուս-Էմմանուելը<sup>79</sup>: Նրա թիկունքում երկու զմբեթներ են, որոնք խորհրդանշում են Երկնային Երուսաղեմը: Խաչաթևերին պռկած հրեշտակները հնչեցնում են իրենց փողերը՝ ազդարարելով դատաստանի սկիզբը:

Հրեշտակների թևերի դասավորվածությունն այնպիսին է, որ Տերունական Նշանը ստացել է ճաճանչախաչի տեսք: Այդպես, մանրանկարիչը խաչին հաղորդել է պատկերագրվող թեմային հարիր՝ ահեղ ու ազդու տեսք: Տպավորիչ է նաև մանրանկարի խորքը, որ ամբողջությամբ դեղին է (խորհրդանշում է ոսկին, աստվածայինը) և ծածկված է աստղերով (խորհրդանշում են հրեշտակներին): Այստեղ այլև չկան նախորդ պատկերների խորքերի գունային բաժանումները<sup>80</sup>, ինչը նշանակում է, որ արդեն ամեն ինչ անմիջականորեն գտնվում է աստվածայինի ոլորտում:

Մանրանկարի թեման, դրա խորքը և Երկնային Երուսաղեմի պատկերումը առնչվում են Ավետարանների<sup>81</sup> ու Հովհաննու Հայտնություն հետ<sup>82</sup>, և պատկերագրում են դրանց համապատասխան մասերը:

*Մեսրոպ Խիզանցին խաչի պատվանդանի հակադիր անկյուններում*

77 Ըստ Նոր Կտակարանի Հոգեգալստյան օրը, Պետրոս Առաքյալի ոգեշունչ քարոզից հետո, շուրջ 3000 հոգի մկրտվում են և դառնում քրիստոնյա: Տե՛ս Գործք. Բ 14-41:  
78 «Երկրորդ գալուստ» մանրանկարին հաջորդող «Վերջին դատաստան» պատկերը նույնպես բնույթով վախճանաբանական է:  
79 Ըստ պատկերաբանության՝ պատանի, անմորուք Քրիստոսը:  
80 Այդպես է նաև հաջորդ «Վերջին դատաստան» մանրանկարում:  
81 Մատթ. ԻԴ 29-31, Մարկ. ԺԳ 24-27, Ղուկ. ԻԱ 25-28:  
82 Հայտն. ԻԱ 1-4:



պատկերել է «Սուրբ Ծաղիկ Ավետարանի» պատվիրատու Ստեփանոս քահանային և նրա կողակցին՝ Նարինին, որոնք ծնրադիր, ձեռքերը պարզած խնդրում են մեղքերի թողութուն<sup>83</sup>:

**Վերջին դատաստան (Թա)**

(Տաճն՝նի՛ն՝նձձձ՝Յ՛ ԶԱճԵ՛Յ չ՛ ԹՅՍն՝ մՅ՛ՁՍ՝ՅԷ Շ՛ Ի (Պն)ՅՍ՛ Ի՛ԲՇԵ՛Յ չ՛ ճն՛ Ս՝Օն՛ ձ՛ Ի՛ Յ՛Ոն՛ն՛ն՛Յ՛Յ՛Յ՛՛)Է

Այս մանրանկարի պատկերագրությունը ևս, դատելով որոշ մանրամասներից՝ ծագում է Հովհաննու Հայտնությունից, և համադրված է բարեխոսություն ու դատաստանի թեմաներին: Դա է հուշում նաև պատկերատակի գրությունը:


Մանրանկարի վերին հատվածի կենտրոնում, գմբեթավոր խորանի մեջ Հայր Աստված բազմել է Չորեքկերպյանների վրա: Ստորին մասում, որտեղ դատաստանի պատկերն է, դեերը փորձում են խանգարել հրեշտակին՝ կշռել մարդկանց հոգիների «մեղքն ու վարձքը»: Աստծո և Չորեքկերպյանների դրվագը վերցված է Հովհաննու Հայտնությունից<sup>84</sup>: Հայր Աստվածը ներկայացված է ծերունու տեսքով՝ կապտա-սպիտակավուն մազերով ու մորուքով և Հիսուսի խաչագարդ լուսապսակով: Մեսրոպ Խիզանցին նկատի ունի Հայր Աստծո Որդու՝ Հիսուս Քրիստոսի, զոհաբերությունը խաչի վրա:

Հայր Աստծուց աջ ու ահյակ կանգնած են Սուրբ Աստվածամայրը և Սուրբ Հովհաննես Մկրտիչը, որոնք ներկայացնում են «Բարեխոսություն» տեսարանը: Պատկերագրական այս առանձին թեմաներից էլ ձևավորվել է «Վերջին դատաստանի» խնդրո առարկա տարբերակը:

Հետաքրքիր է ներկայացված բուն դատաստանը: Այստեղ մանրանկարի վերնամասը տարանջատող եզրաշերտից կախ է ընկած կշեռքը, որի նժարներին դրված են անմեղ և մեղսալից մարդկանց հոգիները: Արդարադատությունը խոչընդոտում են երեք դեերը, որոնց իր երկար նիզակով սաստում է պատկերի աջ անկյունի հրեշտակը: Դեերից մեկը թեթև (անմեղների) նժարը փորձում է ցած իջեցնել՝ իբր մեղքերից ծանրացած է, իսկ մյուսը՝ ծանր (մեղավորների) նժարը բարձրացնել՝ իբր թեթև է:

Դեերի կերպարները զավեշտալի են՝ կիսադեմ, մեծ քթերով, չուված աչքերով, պոչավոր ու սմբակավոր, տարօրինակ գլխարկներով, խավար մարմիններով: Մեսրոպ Խիզանցին նրանց պատկերել է գրոտեսկին հատուկ արտահայտչամիջոցներով: Եվ կրկին մանրանկարիչն օգտագործել է տատասկների մոտիվը, այս անգամ՝ որպես դժոխային տանջանքների խորհրդանիշ:

83 Պատվիրատուներին շատ հաճախ պատկերում են «Երկրորդ գալուստ» մանրանկարում:  
84 Հայտն. Դ 3, 7: Չորեքկերպյանները հիշատակվում են Աստվածաշունչ մատյանի տարբեր գրքերում:



Մանրանկարների Տերունական շարքը եզրափակում է «Հիսուս Քրիստոս և Մարիամ Աստվածածին» դիպտիխը: Այդ պատկերները գտնվում են ձեռագրի հանդիպակաց էջերին՝ որպես մեկ թեմայի փոխըացում:

Թվում է, թե Մեսրոպ Խրեզանցին այս մանրանկարներում է խտացրել ստեղծագործական ողջ վարպետությունը: Կուռ հորինվածքը, դիմապատկերի արտահայտչականությունը, գույների ընտրությունը, համադրումն ու ներդաշնակ կիրառումը, զարդի ու զարդապատկերի գեղարվեստականությունն ու ճաշակավորությունը՝ բոլորը միասին այս մանրանկարներին հաղորդել են երկու առանձին, սակայն թեմայով շաղկապված սրբապատկերի (իկոնա) բնույթ<sup>87</sup>:

Նմանատիպ պատկերները հայկական մանրանկարչություն են մուտք գործել ԺԶ-ԺԷ դարերում<sup>88</sup>: Սրանք քրիստոնեական արվեստում հայտնի «Բարեխոսություն» (Դեխիս)<sup>89</sup> պատկերազրական թեմայի հետագա, ավելի ուշ շրջանի տարբերակներն են<sup>90</sup>: Այդ մանրանկարներում դասական խնդրարկությունից բացի, երբ Աստվածամայրը բարեխոսում է՝ Որդուն պարզած ձեռքերով, հանդիպում են տարբերակներ, որոնցում Ս. Աստվածամայրը բացել է ստինքը և այդպես է դիմում Հիսուս Քրիստոսին<sup>91</sup>: Նմանատիպ մանրանկարների թեման ծագում է պարականոն գրվածքից<sup>92</sup>: Հենց այս պատկերազրական տարբերակն է օգտագործել Մեսրոպ Խրեզանցին:

Հիսուսին ու Սուրբ Կույսին մանրանկարիչը պատկերել է մեծադիր խորանների մեջ, որոնց զագաթների գմբեթները դուրս են մանրանկարի շրջանակից: Խորանների գլխազարդերը, կողային սյուն-երկղնները և մանրանկարների շրջանակները մշակված են գեղեցկորեն գունեղ՝ բուսական ու երկրաչափական զարդերով: Զարդարուն են նաև Հիսուսի ու Մարիամի լուսապսակները: Կարմիրի, դեղինի, կանաչի, կապույտի գու-

85 Պատկերատակի գրությունը. «զԲեզ աղաչեմ ով Միածին, յորժամ գաս դու յատեան դատաստանին, անտես չառնես զճողկող սորին, զՄեսրոպ դպիրս Խիզանցին, արժամ առնես փառաց քրին որպ(ես) զաւագակն ի մէջ դրախտին, ևս առաւել և որ ասէ զողորմին և մի յիշեսցէ զմեղս ն(ո)ց(ին) ամենևին»: Պատկերի միջի վարդակներում՝ «Յ(իսու)ս», «Ք(րիստո)ս»:

86 Պատկերատակի գրությունը. «Ով Տիրամայր կոյս Ա(ստուա)ծածին, դու լեր բարեխաւս առ Միածին Որդին, յորժամ գայցէ փառաւք վերին, անտես չառնես ի յատենին, զստացող սորա զտ(ե)ր Ստեփաննոս և զհւր որդին»: Պատկերի միջի վարդակներում՝ «Մար», «իամ» («Մարիամ»):

87 Համանման պատկերների սրբապատկերային (իկոնա) բնույթի մասին տես՝ Դ. Հակոբյան, Հայոց Տերունական սրբապատկերները, Երևան 2003, էջ 105:

88 ՄԱ. ձեռ. հմր. 5579 (1577 թ.) 23բ-24ա, ՄՄ. ձեռ. հմր. 6093 (1604 թ.) 27բ-28ա, և այլն:

89 «Դեխիսի» հնագույն օրինակներից է Սինայի Ս. Կատարինե եկեղեցու որմնանկարը (565-566 թթ.):

90 Ավելի մանրամասն տես՝ Ա. Մնացականյան, Բարեխոսության քրիստոնեական թեման հայ մանրանկարչության մեջ, Հայկական արվեստ 1, Երևան 1974 թ., էջ 82-85:

91 Բարեխոսության այս տարբերակը ծագում է «Ստնտու Աստվածածին» պատկերագրությունից: Հայկական մանրանկարչության մեջ այն առաջին անգամ պատկերել է Թորոս Տարոնացին, «Գլածորի Ավետարան» ՄՄ. ձեռ. հմր. 6289 (1323 թ.):

92 «Ե (Աստվածամայրը, Ա. Ա.) սկսաւ աղօթել առ Միածին Որդին և Աստուածն մեր, և յաղօթելն իւրում ասէ այսպէս. Ո՛ Տէր իմ, և արարիչ նախայաւիենական, ո՛ Տէր, Միածին Որդի իմ և փրկիչ Յիսուս Քրիստոս, ո՛ Տէր, որ հոգոց և մարմնոց ունիս իշխանութիւն, որ հաճեցար յաղախին ծառայս Քո, և ծնար՝ Աստուած և մարդ կատարեալ, և ստեամբ կերակրեցար...»: Տես՝ Թանգարան Հայկական հին եւ նոր դպրութեանց, Բ, Անկանոն գիրք Նոր Կտակարանաց, «Տեսիլ Աստուածածնին զոր յայտնեաց մնա իրեշտակն գտեղի տանջանացս թէ որպէս տանջեն զմեղավորքն», Վենետիկ 1898 թ., էջ 419:



նապնակը և ընդհանուր զարդային համակարգը մանրանկարներին տալիս են ծաղկափթիթ գորգի տեսք, հաղորդում արտակարգ գեղարվեստական հնչեղութուն:

Տպավորիչ են նաև Հիսուսի ու Մարիամի կերպարները: Հիսուսը ներկայացված է ծալապատիկ նստած<sup>93</sup>, ձեռքերը կրծքին ծալած, և դատելով դեմքի արտահայտությունից ու թեմայի թելադրանքից՝ համակ ուշադիր ունկնդրում է սիրասուն Մոր խոսքը: Մարիամը պատկերված է ծնկներից վեր, երկու ձեռքով ստինքը բռնած: Նրանք երկուսն էլ պատկերված են դիմահայաց: Մարիամը չի նայում Որդուն, Մեծ Բարեխոսի հայացքը ուղղված է նրանց, որոնց համար է դիմում Հիսուսին՝ հայցելով մեղքերի թողութուն:

Բարեխոսություն խնդրողների շարքում են նաև ինքը՝ Մեսրոպ Խիզանցին, և տեր Ստեփանոսն ու նրա որդին: Դրա վկայությունն են մանրանկարչի գրությունները, որ նա թողել է պատկերների տակ: Շատ հավանական է, որ այս երկու մանրանկարների առանձնահատուկ զարդապատկերայնությունն է առիթ տվել Ավետարանն անվանադրելու «Սուրբ Ծաղիկ»<sup>94</sup>:

Ēāñ³ÝŸ»ñ, ³í »i ³ñ³ÝçāŸ»ñ, ³Ýí ³Ý³Ā»ñĀ»ñ,  
Ēāōē³Ýó³ā³i Ī»ñŸ»ñ

Ավետարանի խորանները տասն են<sup>95</sup>: Դրանք պարզ են թե՛ պատկերագրությունում և թե՛ գեղարվեստական մշակմամբ, ինչը պայմանավորված է գաղափար օրինակի ազդեցությամբ: Խորանների շարքը սկսվում է համեմատության տախտակներով, որտեղ գլխազարդերի կիսախորաններում պատկերված են Եվսեբիոսն ու Կարպիանոսը: Հանդիպակաց այս մանրանկարներում նրանք պատկերված են դիմադարձ, ձեռքներին՝ բացված գալարափաթեթներ՝ համեմատության կանոնները, որ ուղղել են մեկ մեկու: Այս երկու խորանները երկսյուն են, մյուսները եռասյուն:

Խորանների մանրանկարչական հարդարանքը շատ գույնավոր է: Դրանք հիմնականում սկիհից ըմպող թռչուններ են, աքաղաղներ և խիստ ոճավորված ծառեր:

Առաջին չորս խորանների գլխազարդերում գերիշխողը բուսական մոտիվն է: Դրանց հաջորդող երկու խորանների գլխազարդերի կիսախորաններում Մեսրոպ Խիզանցին պատկերել է նստած ուղտեր, որոնց պատկերները համեմատության տախտակներում հանդիպում են կիլիկյան մանրանկարչության մեջ<sup>96</sup>: Հաջորդ երկու խորանների գլխազարդերի դեկորը բաղկացած է երկրաչափական մոտիվներից, իսկ վերջին երկուսում՝ կրկին բուսական: Փոխելով խորանների գլխազարդերի պատկերագրման կազմը

93 Այս դիրքը շատ տարածված էր Վասպուրականի կերպարվեստում:  
94 Ձեռագիրն այդ անունով է կոչվում արդեն 1740 թ. հիշատակարանում. «ես Շաիրուլալայ տեր Ստեփանոսի որդի մեղաւոր տեր Օվանէս յեկայ Սուրբ Ախպէակն ուխտ արի, յեկայ Սուրբ Ծաղիկ Աւետարան համբուրեցիմ: Թուխն ՌՅՁԹ (1740 թ.) յուլիսի ԺԵ» (261բ):  
95 11բ, 12ա, 12բ, 13ա, 13բ, 14ա, 14բ, 15ա, 15բ, 16ա:  
96 Տես՝ Ս. Տէր-Ներսէսյան, Կիլիկեան մանրանկարչական Աւետարան մը, «Հանդէս Ամսօրեայ», 1961, հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 987: Անվանի արվեստաբանը Ավետարանը բնագրում է ԺԳ- դարի վերջ, ԺԴ դարի սկիզբ:

Մեսրոպ Խրիզանցին օգտագործել է պատկերի հաջորդական ուրվագրման սկզբունքը:

Ավետարանիչների պատկերագրությունը հետևում է Տերունական մանրանկարների ոճին ու հորինվածքային առանձնահատկություններին, իսկ ավետարանների անվանաթերթերի մեծադիր գլխազարդերը մոտ են խորաններում կիրառված պատկերաստեղծական կանոնին:

Ավետարանիչներն ու նրանց ավետարանների անվանաթերթերը գտնվում են ձեռագրի հետևյալ էջերին՝ Մատթեոս (17բ-18ա), Մարկոս (88բ-89ա), Ղուկաս (134բ-135ա) և Հովհաննես ու Պրոքորոն (208բ-209ա):

Մատթեոսը, Մարկոսն ու Ղուկասը պատկերված են նստած երկար թախտին, ձեռքներին գրիչ ու թուղթ: Թախտերը ներկայացված են խիստ ոճավորված, գրեթե սիմվոլիկ: Դրանք երկար երիզներ են, որոնք միաժամանակ մաս են պատկերատարածքի ձևավորման, և ունեն ոտնակներ: Ավետարանիչների մարմնի կառուցվածքը նույնն է՝ կարճ ոտքեր և ձգված իրան: Երկար թիկնոցը ծածկում է նրանց ոտնաթափերը, նույն այդ թիկնոցի ծալքավորման միջոցով էլ Մեսրոպ Խրիզանցին ստացել է նրանց մարմնաձևերը:


Մատթեոսին մանրանկարիչը ներկայացրել է տարեց մարդու արտաքինով՝ սպիտակահեր ու երկար մորուքով, Մարկոսն ու Ղուկասը միջին տարիքի են, իսկ Պրոքորոնը անմորուք պատանի է: Հետաքրքիր է Մատթեոսի պատկերի շրջանակը, որը եռաչերտ է և ներառված է ութանկյուն հավելյալ շրջանակի մեջ<sup>97</sup>: Մյուս ավետարանիչների պատկերների շրջանակները հար և նման են Տերունական մանրանկարներում կիրառվածներին:

Միջավայրը, որում գրի են առնվում առաջին երեք ավետարանները, գրեթե կրկնվում է վերնամասում կապույտ երկինքն է ու դեպի վեր բացվող վարագույրը, իսկ ներքին տարածքը ձևաստեղծված է տարակողմ երիզների, փոքր զարդերի համադրումներից: Մարկոսի ու Ղուկասի նկարադաշտերում ներառված են նաև մեկական փոքրիկ խորանատիպ գմբեթակիր շինություններ: Ճարտարապետական դեկորը և օգտագործած գույները բավական աշխուժացնում են այս մանրանկարները:

Բոլորից տարբեր է Հովհաննես Ավետարանչի կերպարը: Հովհաննեսը ներկայացված է կանգնած, չափերով մեծ, ծերունու արտաքինով: Հովհաննեսը հայացքը հառել է դեպի երկնքի սեգմենտը, որտեղից դեպի նրա բերանն են իջնում երկու ճառագայթ, որոնք միավորվելով հատման կետում՝ նմանվում են սրի, ըստ Պողոս առաքյալի<sup>98</sup>: Այս ճառագայթ-սուրը նշանակում է նաև, որ Աստված ինքն է Հովհաննեսի բերանը դնում այն խոսքերը, որ նա թելադրում է Պրոքորոնին: Հովհաննեսը միջնորդ է Աստծո և Պրոքորոնի միջև, որն արտահայտվել է նրա շարժումով: Ավետարանիչը ձախ ձեռքը հնազանդության դիրքով պահում է կրծքի մոտ, գլուխը հակել է դեպի Պրոքորոնը, իսկ աջով օրհնում է նրան:



97 Նմանատիպ շրջանակներ հանդիպում են Նոր Զուղայի մանրանկարչությունում:  
98 «Կենդանի է Աստծու խօսքը, ազդու եւ ակտիվ հատու, քան ամէն մի երկայայրի սուր. եւ կտրում անցնում է մինչեւ ոգու եւ հոգու, յօրէրի եւ ողնածուծի բաժանման սահմանը. նա քննում է սրտի մտածումներն ու խորհուրդները» (Եբր.Դ 12):



Վերջինիս փոքրադիր կերպարը մանրանկարված է խաչակիր գմբեթավոր կառույցի մեջ: Մանրանկարի ամբողջ խորքը պատված է ալիքաձևերով: Հովհաննեսի մարմինը ամփոփված է դրանց կանաչադեղնավուն, դեղնաօբրայագույն և կապույտ-սպիտակավուն եռաշերտում, որը Սուրբ Հոգու ներգործության նշանակն է:

Ավետարանիչների խորհրդանշանները՝ մարդ, առյուծ, եզ և արծիվ, Մեսրոպ Խիզանցին պատկերել է անվանաթերթերում, սկզբնատառի տեսքով: Անվանաթերթերի գլխազարդերը բավական մեծ են և վերնամասում պսակված են սկիհից խմող թռչուններով: Առաջին երեքը հնգախորան բացվածք ունեն, Հովհաննեսի անվանաթերթինը յոթ խորան է, որի կենտրոնում ութ թևանի գեղեցիկ զարդ է<sup>99</sup>: Անվանաթերթերից առաջին երկուսի գլխազարդերը ծածկված են բուսական, իսկ հաջորդ երկուսինը՝ երկրաչափական զարդամոտիվներով: Անվանաթերթային լուսանցազարդերը պսակված են խաչերով, բացառությամբ Մարկոսի անվանաթերթի:

Ձեռագրի մնացած թերթերի նկարչական ձևավորումը հարուստ է զարդագրությամբ: Եղածները բուսազարդեր ու թռչնազարդեր են, իսկ որոշ թերթերին հանդիպում են նաև լուսանցապատկերներ՝ կապված ավետարանական բնագրի պատկերազրվող որևէ հատվածի հետ: Այդ լուսանցապատկերները՝ «Տաճարիկ» (70բ, 121ա, 196ա), «Հովսեփ Արեմաթացի» (85ա, 130բ, 204բ, 255ա), «Մարիամ Մազղաղինացի» (131բ) գեղեցկորեն ու իմաստնորեն ամբողջացնում են ձեռագրի մանրանկարչական ձևավորումը:

Վերոգրյալից կարելի է եզրակացնել, որ Մեսրոպ Խիզանցու «Սուրբ Ծաղիկ Ավետարանը» ժե դարի հայկական մանրանկարչության լավագույն ստեղծագործություններից է իր եզակի պատկերազարդական ու խորհրդաբանական լուծումներով և բարձրարվեստ կատարմամբ:



99 Բոլոր բացվածքները առնչվում են թվային խորհրդաբանությանը:



# ՄԸՆՐԱՆԿԱՐՆԵՐ

Մաշտոցյան Մաթենագրարան  
չեռ. 11203





Գ արքիեզ Կրէշտակն աւետիս տայր-  
սբ կուսին ճարիամու : Ն

ԱՎԵՏՈՒՄ  
(ՄՄ ձեռ. հմր. 11203)



ԳԻՒ ԺԵՍՈՆԵՂԵՆԻ ԵՔԱՆ ԴՈՒՎՈՒՅ ԹԱՅԱՆ  
ՈՐԱՅԻՆ յԵՐԿՐ ԿՐԱԳՈՒԹԻ ԴԱՆՆԿԱՆՆԵ

ԾՆՈՒՆԴ  
(ՄՄ ձեռ. հմր. 11203)



Բառանարեւ իտաճարն և զմանուկն  
զբուեաց սիմէոն ծերն իգիրկս իւր:

ՏՅԱՌՆԵՂԱՍԶ  
(ՄՄ ձեռ. հմր. 11203)



Տիրապետի քի որ ի յորդանանն գետն իջաւ և  
զգլուխն վիշապին ջահ ջահեաց :

3

ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ  
(ՄՄ ձեռ. հմր. 11203)



Պայծառակերպութի թի որպայճառացաւ  
Իմաստութեան լերինն և յայտեաց զիցն =

ՊԱՅՃԱՌԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ  
(ՄՄ ձեռ. հմր. 11203)



Նարուձին զազարու զոր քն յարոյց զչորեբաւ  
րեա մեռեալն իգերեզմանէն = ՚

ԴԱՋԱՐՈՒՄԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ  
(ՄՄ ձեռ. հմր. 11203)



Տա աղիս զարդնէ զոր քն յաւանսակաւ  
Էկաւ իբազարն Էմեմ ընդ առարկէն :





Ըմբռնուեալն թի զոր յուրայ համբարելով  
մատնեաց և հրայ ըն կալանն :

ՄԱՏՆՈՒԹՅՈՒՆ  
(ՄՄ ձեռ. հմր. 11203)



Խաչելութիւն քի զոր իսկ զժողովն ազայ  
Խաչ էա քն յեր :

6

ԽԱՉԵԼՈՒԹՅՈՒՆ  
(ՄՄ ձեռ. հմր. 11203)



Եւ երբունս դժոխաց զոր քն յարեաւ :  
և աղատեաց զարամ եղևաց :

ԴՅՈՒՆՔԻ ԱՎԵՐՈՒՄԸ  
(ՄՄ ձեռ. հմր. 11203)



Գերեզմանն թի՛ւ Արամատայլ Կրեշտակն  
իսկ յիմնն. և ուղտերից կանաքն .  
և սրահապանքն ուղտաբախտ :

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ  
(ՄՄ ձեռ. հմր. 11203)



Համբարձումն քի որ համբարձաւ յերկինս -  
և աշակերտքն ապուշ ժնացին :

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ  
(ՄՄ ձեռ. հմր. 11203)



Ազատեալիցս հոգին . և հրեղէն լեզուս  
իջաւ իւր յառարեալս =

8


ՀՈԳԵԳԱՆՈՒՄՍ  
(ՄՄ ձեռ. հմր. 11203)



արքայ  
մայր

Խաչն արուեստիս և փողջն Կաթրիկ  
Եանքն որհնչէն և Կանն իդատաւտան :

ԵՐԿՐՈՐԴ ԳԱՆՈՒՍ  
(ՄՄ ձեռ. հմր. 11203)



Չորեք կերպեան ամուսնէ և հայր բազմեալիվր  
և կոչիւնէ որմեղքու վարձք բաշէն :

9

ՎԵՐՁԻՆ ԴԱՏԱՍԱՆ  
(ՄՄ ձեռ. հմր. 11203)



Ը քեզ օղաչեմ ուխտաճին. յոր ժամ գաս դու յա  
 տեան դատաստանին. անտես չառնես դժարկի  
 զսորին. զմեքոսց դպիրս խելանցին. արժան  
 անես փառաց քոթորնց զաւազակն իմեզ  
 դրախտին. եւստուսեղ ետրանք զողո  
 բնին եւ միշտ եցե զճարնց  
 ամենա ին :

**ՀԻՍՈՒՍ**  
 (ՄՄ ձեռ. հմր. 11203)



Օվ տիրամայր կոյս անձամբն. դու լեր իսար  
Էրառա առ միամբն որդին. յոր լամ գայցե  
փառաւք ձերին անտես շտանէս իշատէն  
ին. զտաացողս որա զտրտեփաննոս և զլի  
որդին : 3

10

ՄԱՐԻԱՄ  
(ՄՄ ձեռ. հմր. 11203)




ԽՈՐԱՆ  
(ՄՄ ձեռ. հմր. 11203)



**Մ** րդ այսէ ներքոյ կարգից կանոնաց պատճառաւ  
 յայտնու գոյն պատճառաւ թէ նոցէ այս պէս խիստայ իւրաքանչ իւր  
 զոր եղանց աւետարանչայն թիւին առջն թիւ կայ ըստ իւրոս  
 քան իւր մասին : Եւ կանայ յառաջ մին ապա յերկրորդն և  
 յառաջ կարգ աւ խաղապետ ընդ բնաւ մին և զնաւարան  
 գրոյն : Եւ ըստ իւրաքանչ իւր թնայ որ ցուցանէ թէ յորտաւ  
 առանձնորոց կանոնայն կայէ թիւն : Եւ յսպիսի ինչ թէ յառ  
 աջին յայտն որոյ թէ յառաջնունն : Եւ Եթէ յերկրորդ յեր  
 րորունն և այնպէս մինչ ցատաննին : Եւ յոր եթէ բացեալ զմ  
 ի զորից աւետարանչայն յորոյ մէ և կանոնիս գիտէ Եթէ որ իցէ  
 զորս և այնոյնս մի մեանց առաջին : Եւ զանձն իւզան յիւր  
 քան իւր անդիս գրանել յորս ընդ նոսին ածան : Չոր մտաւ  
 գրոյն և ունիցիս առեալ զառաջա կայտն թիւն իմորեացիս  
 զնա իմակաւ կանոնին ընդ որ կարմրոս գրոյն ներքա գրոյն  
 ի ջուցանիցէ և կանոնս գրոյն իմ և յառաջաքոյն պէտ  
 յն իմակաւ կանոնին թէ բան երրորդ և որք իցէն առաջեալ  
 և յորոյ այլոց աւետարանչայն որք ի կանոնին իցէ :  
 Չոր թիւ և ունիցիս առ ընթերցանայն ինգրեացիս  
 զնա ի յանցն իւրան յիւրաքանչ իւր աւետարանի իտեղ  
 իս ցանգոյնս առաջեալն նոցա և գուցէս որք երկոր  
 ու թիւերոց և զմաւորմերոց գպիրս յիշէս :

ԽՈՐԱՆ  
 (ՄՄ ձեռ. հմր. 11203)



სიწეს  
(MS 862. h. 11203)








ԽՈՐԱՆ  
(ՄՄ ձեռ. հմր. 11203)





ԽՈՐԱՆ  
(ՄՄ ձեռ. հմր. 11203)



ԽՈՐԱՆ  
(ՄՄ ձեռ. հմր. 11203)



სიძულ  
(MS № 11203)



ՄԱՏԹԵՆՍ ԱՎԵՏԱՐԱՆԻՉ  
(ՄՄ ձեռ. հմր. 11203)



ՄԱՏԹԵՈՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ ԱՆՎԱՆԱԹԵՐԹԸ  
(ՄՄ ձեռ. հմր. 11203)



ՄԱՐԿՈՍ ԱՎԵՏԱՐԱՆԻՉ  
(ՄՄ ձեռ. հմր. 11203)



ՄԱՐԿՈՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ ԱՆՎԱՆԱԹԵՐԹԸ  
(ՄՄ ձեռ. հմր. 11203)



ՂՈՒԿԱՍ ԱՎԵՏԱՐԱՆԻՉ  
(ՄՄ ձեռ. հմր. 11203)



ԴՈՒԿԱՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ ԱՆՎԱՆԱԹԵՐԹԸ  
(ՄՄ ձեռ. հմր. 11203)



ՀՈՎԻՏԱՆԵՍ ԱՎԵՏԱՐԱՆԻՉ  
(ՄՄ ձեռ. հմր. 11203)



ՀՈԿՅԱՆՆԵՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ ԱՆՎԱՆԱԹԵՐԹԸ  
(ՄՄ ձեռ. հմր. 11203)




ցէք իբաղաբէ իբա  
 ղաբ: որպ զիէկեո  
 ցէ իսկերաւ ձերան ար  
 իւն արգար հեղեալ  
 յերկրի յարէն էն  
 յաբէլի արդարոյ  
 մինչև զարիւնն զա  
 բարիայ որդոյ բար  
 իբէայ զորապանէք  
 րնդմէլ տաճարին  
 և անդանոյ:

**Մ**տէնասեմ ձեզ  
 Ալեացէ այն նամ իսկ  
 րանապատարարիկ:  
**Է**մ էմ որկատ  
 րիկն զմարգարէան  
 և բար կոծատնէկը  
 զտաւրէալուն տո  
 բեզ քան իցանսն  
 ամ կամ էցո ծողով  
 էլ զմանկութան քո  
 զորաւրինակ ծող  
 ակէ հաւ զձակա ի

Ը մտա Ը Ը Ը Ը  
 մտա Ը Ը Ը Ը

ւր ընդ թեալ և  
 ոչ կամեցարուք ւ  
 հայ Թողեալ լիցի  
 ձեզ տունդ ձերաւ  
 էրակ:

**Բ**այցասեմ ձեզ  
 Թէ ոչ և տեսանից  
 էք զիս յայնմ հետե  
 մինչև աս իցեք ւ  
 ր հնեալ էկեալ  
 յանուն ան:



**Բ**այցասեմ ձեզ  
 ընդ թեալ և  
 ոչ կամեցարուք ւ  
 հայ Թողեալ լիցի  
 ձեզ տունդ ձերաւ  
 էրակ:

Ը մտա Ը Ը Ը Ը  
 մտա Ը Ը Ը Ը

որ ուտէն զտունս  
այրեաց պատճառ  
անապ յեկարեալ  
զաղաւթս զհաւելի  
դատաստան ընկ  
ալ ցին :  
**Կ**այր յն ընդ գեւ  
գաւ նձան ակին -  
և տեսանէր ըէ զե  
արդարկանէր յող  
ով ուրդն պղինձ ի  
գանձանակն . և բա  
զում մէծատուփ  
արկին բազում ինչ :  
**Ե**կն այր մի . և արկ  
անդ . երկ ուսլու  
մայս որէնաբարա  
կիտ մի :  
**Ե**յն կոչ էցեալ առ  
ինքն զաշա կերտան  
իւր և ասէ ցնտաց :  
**Ս**մէն ասեմ ճեզ  
զիայրին այն տառա

պեալ շատ արկ  
բան զամէն էս էանո  
ր արկին . ի գանձ  
ան ակն :  
**Ք**անզի ամէնէք  
ի ն յաւել տրոաց իւր  
էանց արկին . այլնա  
իջքաւ որ ու ըէն է  
իւրմէ . զամ ինչ  
զորունէր արկոյ  
իւ չափ զկէ  
անս իւր  
**Ե**յն անէ ըն  
րա ի տաճ  
արէ անտի ասէ ցնա  
մի յաշակերտացննր :  
**Կ**արդ ապետ տես  
որպիսի էն ջարինքս  
և որպիսի էն շինու  
ածքս . :  
**Կ**արտաս իանսիւտ  
նմ այ յն և ասէ տե  
սանէս զայդ ամ էն



մր շե 2 միտ 3 4 մր շե 2 մե միտ 3 4 մր

ՏԱԳՐԻԿ (ՄՄ ձեռ. հմր. 11203)



Էրի տասարդ միգի  
 նշաներ ընդ աստի  
 կողմանէն զգեցեալ  
 պատմութեան սպիտակ  
 կեղաբնութեան...

Նախ ասէ զնոր  
 մեկընդհար. զյս  
 ինչոքէք զնապոյթ  
 սոցի. զնապոյթ էրեւան  
 յարեան շէպատոս  
 աւաստիկ տեղին ուր  
 էր ինչնաւ: ԼՂՅԵՐԹ  
 այք սասցիք զաշա  
 կերտան նորա Լցր

պետրոս:  
 Ընկա հայ յառա  
 ջայ գոյն էր ըսցքան  
 զձեզ ի դալիլայ անդ  
 տեսան իցէք զնա

որպէս ասացն ձեզ  
 իբրև լուսն էին  
 Լախախեան ի գերեզ  
 մանէն: քանզի զահի

հարեալ էին:  
 Եւ ոչ ումէք ինչ  
 աւաց ին կէրեկ  
 ընչ էին:



արուցեալ  
 յառաւ

աւտոն յառաջին  
 միաշաբաթուան և  
 էրև էցաւ մարիամ  
 ու մարդաբէնացի  
 ոյն յորմէ հանեալ  
 էր զեաւ ընդ զնա:  
 Լեւա էր ըսեզ պատ  
 մեաց այնոց իկորնոյ  
 նմանէ ին մեծ զեա

լայ իննասոցին  
 Երբ արեւ լուսն  
 թէ կենդանի է յս  
 և յարուցեալ էրև  
 էցաւ նախ ոչ հա  
 առացին:

Ետոյ էրև էցաւ  
 յս այրով կերպար

Վ	Ղ	Ս	Մ
ՎԵ	ՂԵ	Ս	ՄԳ
ՎԳ	ՂԸ	Ս	ՄԴ

Լիցայ իջուցանել

**Է**զուարձակեաց  
Հայն մեծ և եհանե  
զողին



**Է**վայրա գոյր տա  
ճարին պատանեց  
աւ յերկուս վերուս  
տ մինչև ցետնարի

**Է**տես եալ հարի  
րապետին որկայր  
անդ. Է՞՞՞ աղաղակ  
եաց և եհան զողին:

**Ս**նէ արդար եայրա  
այս որդի միջեր:

**Է**ին և կանայք ոմ  
անք որ հայեին իհե  
րաստանէ յորսէր  
մարիամ մագ դաղե  
նացի. և մարիամ յա  
կորա փոքրկանն և յո  
վսեայ մայրն և սող  
ուիէ. որք ջարժամ

կրնիգալիկայ գհեա  
շրջինն նորայ եպա

**Է**տեին վնայ  
Էայլ բայ բան  
կանայք որ ընդ նամ  
խակ և կեալիկն  
յերուս աղէս:



**Է**րեկոյ եղևրա  
ն զի ուր բաժնը որի  
շարժմն մտանէր:

**Է**կեալ յախէի որ  
յարեմաք եայն էր  
այրն պարկէշտ նասի  
արար որ և ինքն իակ  
ակն ունէր արքայ  
ու թաննայ: Համ  
արձակ էցաւ Էմուտ  
ատպիղատոս և իւր  
նոր էաց զմար

**Է**մինն յի  
Էպիղատոս զա  
ր մացաւ Թէ այն

Մր շր Էր շր շր շր շր  
ՄԻԲ ՄԻԸ ՄԻԸ ՄԻԸ ՄԻԸ  
ՄԻԸ ՄԻԸ ՄԻԸ ՄԻԸ ՄԻԸ  
ՄԻԸ ՄԻԸ ՄԻԸ ՄԻԸ ՄԻԸ

միտա գիրն ասե էթե  
հայեացին ինա յորս  
խոցեցին :



**Ե**տ այսորիկ  
աղաչեաց ըն

պի՛ զաստու յովսէփ  
որ յարեմաթեա կր  
աշակերտ յի իծած  
ուկ զն ասին հրեից  
զի քարձցե զմարմ  
ին յիտուսի :

**Ե**րամաեաց պիղ  
այտոս :

**Ե**կին և քարձցին զնա :  
**Ե**կն և նիկոյ դիմոս  
որ եկեալեր առ յս ի գ  
իշերի զառաջինն և  
եքեր զմուռս իստուն  
ընդ հարուես իբրև  
տերս հայրիւր :

**Ե**րին զմարմինն  
յի և պատեցին կտա  
ով իննիաւք հանդէ

րձ որոյ ասրէն էր լը  
էից պատել :

**Ե**կր իտեղևոջն յո  
րուս իսաչեցաւ պար  
տեղ և ի պարտիզի անդ  
գերեզման նոր յորում  
ոչոք էր էք էր էալ :

**Ե**նդ զն ուրբաթուն  
հրեից զի մաւտեր  
գերեզմանն սր  
էդին զ յս :

**Ե**րամա զա  
մարմունն մարմուն

մագդաղէացի գայ  
առ աւատուն ընդ  
արշալուան ի գերեզմ  
ան անոր և տեսանե  
զվէն քարձեալ ի դր  
անց գերեզմանին :

**Ե**պս ընթանաւ և գայ  
առ սիմոն պետրոս  
և առ միտա աշակերտն  
զոր սիրէր յս և ասէ .



ՀՈՎՍԵՓ ԱՐԻՄԱԹԱՅԻ  
(ՄՄ ձեռ. հմր. 11203)



Կապանք  
 Մի քի ծնո  
 և ոգ եր այ և  
 պէս խաւսեալ զմա  
 յբնր մարիամ յով  
 սեփու մինչ չե է  
 կեալ առ մի մեանա  
 պատա յղացեալ ի  
 Հոգոյն սրբոյ  
 Ե յովսէփ այրն  
 նորա քանզի արդ  
 արե և ոչ կամեր  
 առակել զնա խոր  
 հեցա լռելեայն  
 արձակել զնա  
 Ե մինչ դեռ նա  
 զայս ամեր զմտաւ  
 ահա հրեշտակսն  
 իսեպէան երեւց  
 աւ նմա և ասե  
 յովսէփ որդի դաւ  
 թի մեռկընչիր ա  
 ռնուլ անքեղ ըզ

մարիամ կին քո  
 քանզի որին մայն  
 ծնեալէ ի հոգոյն  
 սրբոյն ծնցի որդի  
 և կուտսցէս զանու  
 ն նորա յն զինափր  
 կեսցե զժողովուր  
 դիւր իմեղաց իւր  
 էանց  
 Ե յայս ամե նայն  
 եղև զի լցցի որաս  
 այսա իսնէ ի ձեռն  
 Ե սայսայ մարդարեի  
 և ահա կոյս յղացի  
 և և ծնցի որդի և կո  
 և զեցէն զանուն նո  
 և ըսէ եմ մանուկ լոր  
 և Թարգմանի ընդ մեզ  
 ամ  
 Ե զարթուցեալ  
 յովսէփ ի քնոյ ան  
 սի արար որպէս  
 հրամայեաց նմա

745  
 745



Հերովդի ահահրէշ  
 տակնն իտեպէան  
 էրեւեր յովսէփայ  
 յէգիպտոս և ասեր  
 արի աւ զմանուկդ  
 և զմայրիւր և գնա  
 յէրկիրն ինչ զի մե  
 ռան որինդ րեին  
 զաննն մանկանդ  
**Վ**էնա յարուցեալ  
 ար զմանուկն և  
 զմայրն և էկն յեր  
 կիրն ինչ  
**Վ**իբրև լուաւ թէ  
 արքէղայոս թագօ  
 որեաց հրէ աստան  
 ի փոխանակ հերով  
 դի հաւրն իւրոյ էր  
 կէաւ էրթալ անդր  
 և հրաման առեալ  
 իտեպէան գնաց ի կո  
 ղմանս գաղիլէացոյ  
 և էկեալ քնակեցաւ

էքաղաքին որկուէր  
 նազարեթ զի լցցի  
 բան մարգարեին  
 Թէ նազով րեցի



կ ու լ է ս յ ի  
**աւ ու լ լ ման**  
**յայն ասինկ**  
 գայ յովհաննէս  
 մկրտիչ քարոզէլ  
 յանապատին հրէ  
 աստանի և ասէլ  
 ապաշխարեցէք զի  
 մերձեալ է արքայ  
 ու թիւն էրկնից  
**Չ**իսան զան որոյ  
 ասացաւ ի մեռն  
 էացեաց մարգար  
 է ի որ ասէ  
**Չ**այն բարբառոյ  
 յանապատի պատր  
 աստ արարեք զմա  
 նսնապարհ նն և ուղ  
 իղ արարեք ըղշաւ

5 4 3 2 1  
 5 4 3 2 1  
 5 4 3 2 1  
 5 4 3 2 1

զմեղաւորս :

**Յ**այն ժամ մատէ  
ան առնա աշակեր  
տքն յով հանու և  
ասէն ընդէր մէքե  
փարիսէցիքն պա  
հեմք յաճախ և բո  
աշակերտքդ ոչ  
պահէն :

**Ա**սէ ցնոսա յս .  
մի՞թէ մարդ ինչ է  
ցէ մանկանց առ  
ազաստի սուգ առ  
նու և մինչ փե սայն  
ընդ նոսաիցէ այլ  
էկեացէն աւուրք  
յորժամ Բարձի ի  
նոցանէ փեսայն և  
ապա պահեացէն :

**Ո**չդք արկանէ  
կապերտ անծափ  
ի վերա հնացեալ  
ձորձոյ : զի առնու

էլանէ զբոս Թիւնն  
նորա ի հանդերձէն  
և չարեւ պատա  
ու մն լինի :

**Ա**նչարկանէն  
գինի նորի տիկս  
հինս ապա թէ ոչ  
տիկքն պատառին  
և գինին հեղու և  
տիկքն կորընչին :  
այլարկանէն զգի  
նին նոր ի տիկն նոր  
և երկորին պահին :



**Ինչդեւնա  
զայս խառ սեր**

ընդ նոսա ահա իշ  
խան մի մատուցեալ  
երկեր պագաներ  
նմա և ստեր դուս  
տրիմ արդ և ս վախ  
ճանեցաւ այլէկեալ  
դիցես զձեռնքոյ  
վերա նորա և կեցցէ :



Տ 47      Տ ԽԹ      2 7Է

արին ընդ նամս զինչ  
և կամ էջան :

**Ն**ոյն պէսև որդի մա  
որոյ չար չարեաց է  
նոցանէ :

**Յ**այն ժամ ի միտ ա  
ռին աշայկերտքննր  
էր է վն յովհաննու  
մկրտչի ասաց  
ցնոսայ :



**Ե**րբևէ  
կին ի ծողով  
ուրդն մատեաւ այրմ  
ի ծուր ի ջանէր նմա  
և ասէր տր ողորմեա  
որդոյ ի մոյ . զի լուսնո  
տի և չար չար հեւ  
նդ անայ :

**Բ**ազու մանգամ  
անկանի ի հուր և էրբ  
էք ի ջուր և մատուցի  
զնա աշայկերտայն

քոց և ոչ կարացին  
բժշկել :

**Պ**ատասխանի էտ յն  
և ասէ ով օպպան  
հաւատ և թիւր մինչև  
յերբ իցէ մընդ քեզ մինչև  
չև յերբ անասցէ մէկ

աճէք զնա առ իս :  
**Ե**ւաստեաց ի նա  
յն և էլ ի նմանէ դեն  
և բժշկեցաւ մանուկն  
ի ծամէն յայն մանէ :

**Յ**այն ժամ մատեան  
աշայկերտքն սուանձ  
ին ասէն զյն մէք ըն  
դէր ոչ կարացար հա  
նէլ զնա :

**Ե**նա ասէ ցնոսա  
վասն թէրա հաւատ  
ու թէ ճէրոյ ամէն  
ասէ մ ճէզ էրբ ուն  
իցիք հօատս քանզհա


Տ 257      Թ 70      Զ 72      Ծ 5      Ծ 252      Թ 5      Զ 7      Ծ 5

տեսցուք զինչէ բա  
 հսայս որեղև զոր  
**Ե**ւոր էց ոյց յէջ :  
**Ե**ւկինսի ու Ռան  
 ալի և գտին զմար  
 իամ և զյուսէսի և  
 զմանուկն եղևալ  
 իմս ուր :  
**Ե**ւ ծանեան վասն  
 բանին որասացա  
 ւոցս զմանկանէն :  
 Եւ ամենէքեան որ  
 լսէին զարմանային  
 վասն բանիցն զոր  
 խաւսեցան ընդ նս  
 հովիւքն :  
**Ե**ւ մարիամ զամ  
 բանս զայս ասիկ :  
 պահէր և խեղճ մու  
 տ լինէր ի սրտի ի  
 ր ում :  
**Ե**ւ զարձան հովի  
 ւքն և փառաւ որ ա

ռնէին և անհնէին  
 զամ . վասն ամենա  
 յնի զոր լուան և  
 տեսին որպէս պա  
 տմ էցաւ նո  
**Ե**ւ զիս լցան  
 աւս . և ուրբ ուսմ  
 էկին Բլ պատկ  
 զմանուկն :  
**Ե**ւ զոչ էցաւ անու  
 ն հր յն որ կոչ էց է  
 արնէր ի հրէշտակ  
 էն . մինչ չև յՅղ  
 աջեալ էր վնայ  
 յոր ուլանի :  
**Ե**ւ իբրև  
 լցան աւ ուրբ  
 սրբ ու թեան և յ  
 լատ աւրինացն մո  
 վսէսիւ ամին զմա  
 նուկն յն յէմ յանդ  
 իմանառնէ լինն :

նր և յս խոյս ետ և  
 և զնաց խոսամ  
 արե անտի:  
 և նինչդ  
 և անցանկը  
 էտես այրմի կոյրի  
 ծնե և հարցինցն  
 աշակերտքն նր և  
 ասեն ռաբբի ոյր  
 վնասե սորա թե  
 հաւր և մաւր իւրոյ  
 զի կոյր ծնաւ:  
 աստասխանի էտ  
 յս ոչ գորա վնասե  
 և ոչ հաւր և մաւր  
 իւրոյ այլ զի յայտ  
 նի լինիցի գործքն  
 այ ի դմա և ի նձ ալ  
 արտե գործել ըզ  
 գործս այնորիկ որ  
 սուսքեացն զիս մի  
 նչ աւուր կա դա  
 զի շէր յոր մամ ոչ որ

կարե գործել մինչ  
 դեռ յաշխարհի եմ  
 լոյսեմ աշխարհի:  
 այսիբրև ասաց  
 էր ուր ի գետին և  
 արար կա ի Բքոյն  
 և ծեփեաց զկաւն  
 ի վրաց աջ կուրին  
 և ասենցն էր թու  
 այ յաւազան ինսի  
 լովամա որ թարքմ  
 անի սուսքեալ:  
 ոգաւ լուացաւ  
 էին և տեսանկը:  
 սի դրացիքն և  
 որոյ տեսալէին  
 զնա յառաջագոյն  
 թե մուրացիկէր ա  
 սէին ոչ սն և որ նա  
 տերն և մուրամայր:  
 կարն ասէին նաւ  
 այլքն ասէին ոչ այլ  
 նամանկը նմա և ինքն



## RESUME

Mesrop *dpir* Khizanc'i is one of the most remarkable artists of 17<sup>th</sup> century Armenian miniature art. The most of creative life (over 50 years) he spent in Isfahan (New Julfa) and in approaching Armenian settlements because of the political and historical events (turkish-persian wars). During creative achievement Khizanc'i produced a rich collection of liturgical manuscripts - 45 of which I have been able to identify. They all are lavishly illuminated with numerous miniatures.

One of them is the Gospel created in 1619 (Matenadaran after Mesrop Mashtoc', ms. n. 11203). Due to the special artistic manier and ornamental decorations this manuscript has been called "Holy Flower Gospel". Mesrop Khizanc'i has copied it from the prospectus example. Some iconographic features of the miniatures are influenced by the apocryphal "Book of Childhood of Jesus Christ". The miniatures of this Gospel have very interesting and unique iconographic and stylistic features. The

painter could replace the figures on the bounded space of the pages due to the vertical, horizontal and wave-shaped circles, which helps to accent any essential detail of the composition, to value the figures according to their acting and to represent the symbolism of any group of them.

The human figures representing the Lord's life has interesting iconographic and semantic interpretations. For example, the figure of Christ in "Transfiguration" or the figure of Judas who is portrayed as a wandering child in the miniature of "The Betrayal of Judas". Except the human figures there are also other interesting iconographic details in this miniatures, such a detail is the motive of star-thistle, which exists in a few miniatures - symbolizing the way of the sufferings of Christ and his disciples.

Briefly, "The Flower Gospel" of Mesrop Khizanc'i is the unique example of 17<sup>th</sup> Armenian miniature art.

## РЕЗЮМЕ

Месроп дпир (чтец) Хизанци один из видных представителей армянской миниатюры XVII века. Почти всю свою творческую жизнь (около пятидесяти лет) из-за разворачивающихся в это время политических событий – турецко-персидских войн жил и работал в Исфагане (Нор Джуга) и близлежащих армянских селениях. От Месропа Хизанци до нас дошло 45 богато иллюстрированных церковных и богослужебных книг различного характера. Одна из них Евангелие 1619 года (Матенадаран, рук. № 11203) за особое художественное и живописное оформление получила в свое время название “ Сурб Цахик” (“Святой цветок”). Рукопись имела прототип, который Месроп Хизанци использовал при иллюстрировании. В иконографии некоторых миниатюр видно влияние апокрифического “Евангелие детства Христа”. Миниатюры этой рукописи имеют интересные и редко встречающиеся иконографические и стилистические особенности. Своеобразные разграничители внутреннего пространства

миниатюр в виде вертикальных, горизонтальных или волнообразных полос не только решают задачу верного расположения образов в ограниченном пространстве, но и способствуют акцентированию определенных деталей композиции, оценке образов, символическому выявлению отдельных групп и т.д.

Интересные иконографические и символические интерпретации имеют образы Господнего цикла, в частности, образ Христа в сцене “Преображение”.

Очень примечателен также образ Иуды в миниатюре “Предательства”, где он представлен как растерянный отрок. Кроме всего выделяются также иконографические подробности миниатюр, в частности, неоднократно встречающийся мотив терний, символизирующий мученический путь Христа и его учеников.

Итак, иконографическая система “Евангелие Сурб Цахик” Месропа Хизанци представляет собой один из исключительных образцов армянской миниатюры XVII века.

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**ՄԵՍՐՈՊ ԴԴԻՐ ԽԻԶԱՆՅՈՒ «ՍՈՒՐԲ ԾԱՂԻԿ» ԱՎԵՏԱՐԱՆԸ**  
**3-26**

**ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ**  
**29-75**

**RESUME**  
**65**

**PEZIOME**  
**65**